Azg Ազգ

24 ՅՈՒԼԻՍ 2012 ԵՐԵՔՇԱԲԹԻ 133(4985)

Կախեթցիներին՝ գինի, ջավախքցիներին՝ ոչ էլ կարտոֆի՞լ

Հուլիսի 19-ին Վրաստանի արեւելյան ու հարավային շրջաններում տեղի ունեցած փոթորկից տուժել են բազմաթիվ բնակավայրեր ու հողատարածքներ, այդ թվում՝ Ջավախքի որոշ հատվածը: Վրացական լրատվամիջոցների փոխանցմամբ, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանային իշխանությունները դեռեւս չեն հաշվել վնասի չափը, սակայն արդեն իսկ հայտնի է, որ աղետի հետեւանքով ոչնչացվել է գրեթե ամբողջ բերքը:

Ախալցխայի շրջանի 18 գյուղեր առավել ուժեղ են զգացել հորդառատ անձրեւների ու կարկտի ուժը: Այդ գյուղերից ոչնչացվել են գյուղատնտեսական ցանքատարածքները, խանդվել են տների տանիքները, կոտրվել ապակիները, տուժել են տնային թռչունները: Աղետից որոշ առումով խուսափել են Ադիգեի, Բորժոմի ու Նինոծմինդայի շրջանի բնակավայրերը:

Անձրեւներից առավելապես տուժել էր Արեւելյան Վրաստանը, հատկապես գինու հիմնական շտեմարան Կախեթի շրջանը: Այս տարածաշրջանի բնակչությանը Վրաստանի նորանշանակ վարչապետ Վանո Մերաբիշվիլիի հայտարարությամբ որոշես օգնություն տրամադրվելու են... գինի, մեկական պարկ ալյուր, դիզվառելիք եւ թունաքիմիկատներ:

Նշվում է, թե վրացական կառավարությունը պատրաստվում է նաեւ դրամական փոխհատուցում տրամադրել տուժած ֆերմերներին ու բնակչությանը, սակայն այդ ամենը կարծես անցնում է Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի կողքով:

Ամեն դեպքում, այս տարածաշրջանի տուժածներին որեւէ կերպ աջակցության մասին պաշտոնապես ոչինչ չի հաղորդվում, թեեւ եթե գինեգործության հիմնական տարածաշրջանի՝ Կախեթի տուժած բնակչությանը գինի են բաժանում, կարող էին ջավախքցիներին էլ գոնե կարտոֆիլ տալ...

Ա. Հ.

ՕՐԵՐԻ ՀԵՏ

Կրակը մոտեցավ Մայր գաղութին

Կիրակի օրվանից ի վեր կասպի մարտեր ծավալվեցին նաեւ Սիրիայի 2-րդ՝ Հալեպ քաղաքում, որն իր էթնիկ ու կրոնական կազմով, հին, նոր եւ նորագույն մշակույթով, առեւտրական նշանակությամբ հանդիսանում է երկրի ամենահավասարակշիռ, ավանդական, բարեկեցիկ ու հանդուրժողական քաղաքը, որտեղ ապրում է մեր ամենակազմակերպված գաղութներից մեկը՝ իր եկեղեցական, մշակութային, կրթական, մարզական ու բարեգործական հաստատություններով՝ ստեղծված նախաեղեռնյան ու հատկապես հետեղեռնյան տասնամյակներում: Ավելի քան 40 հազար հայ է այժմ ապրում այնտեղ, ընդհանրապես բարեկեցիկ եւ, հետեւաբար, իշխանամետ:

Եվ հիմա, Դամասկոսի համեմատաբար փոքրաթիվ գաղութից հետո վտանգված է այս զորավոր հայ համայնքը: Ու թեեւ դեռեւս չգիտենք դեպքերն ինչպես կծավալվեն, սակայն հաստատապես դրանք ցնցել ու ցնցելու են համայնքը՝ շատերին մղելով արտագաղթի, ոչ միայն դեպի հարեւան Լիբանան, որը սիրիական դեպքերի անմիջական ազդեցությունը կրում է եւ կրելու է անկասկած, այլեւ դեպի հեռավոր ափեր՝ ճնշիչ մեծամասնությունը շրջանցելով Հայաստանը:

Չեմ ուզում անդրադառնալ Սիրիայի եւ ողջ տարածաշրջանի դեմ ծրագրված ու համակարգված դավադրությանը՝ անշուշտ օգտագործելով երկրների ներքին հակասությունները: Դա համապարփակ եւ մասնագիտական մոտեցման կարիք ունի: Այլ ցանկանում եմ պարզապես շեշտել, որ Հայաստանի իշխանություններին ուղղված մեղադրանքները՝ սիրիահայությանը անհրաժեշտ օգնություն չտրամադրելու մասին, անարդար է՝ անշուշտ միջազգային քաղաքականության ու տարածաշրջանային անվտանգության համատեքստում: Դավադրությունն այնքան մեծ է, այնքան հզոր, որ Հայաստանը ոչինչ չի կարող անել դրա դեմ: Սակայն մեր անզորության գիտակցումը պետք չէ մեզ մղի այլ՝ հատկապես մարդասիրական ու բարեգործական հնարավորությունները չմոբիլիզացնելու՝ օժանդակելով տեղի հայությանը, բարոյապես ու գործնապես թիկունք կանգնելով նրան: Եվ դա՝ ներկա պահի հրամայականներով:

Ինչ վերաբերում է հեռահար մեր գործունեությանը, ապա չեմ կարող առայժմ տեսական թվացող մի ընդհանրացում չանել. եթե մեր պետական իշխանություններից պահանջում ենք մեր երկրում հաստատել արդարությունն ու արդարադատությունը, գործնականորեն խթանել ու զարգացնել տնտեսությունն ու գիտությունը, ապա դա պետք է անել ոչ միայն Հայաստանում ապրող ներկա ազգաբնակչության համար, այլ մեր ժողովրդի այն հատվածի համար նաեւ, որն ապրում է հարեւան ու մերձավոր երկրներում: Մեր ազգակիցները ուշ կամ կանուխ լքելու են դրանք: Եվ մեր երկիրն ի վիճակի պետք է լինի հյուրընկալելու, պատսպարելու, աշխատանքով ապահովելու նրանց: Նրանք իրենց ապագան պետք է տեսնեն այս երկրում, ինչպես եւ մենք բոլորս:

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

Ռուս փորձագետներ. Արեւմուտքին երեւի ձեռնտու կլիներ, որ Արցախում զինվորական դիկտատուրա լիներ

Լեգիտիմ իշխանությունը նրանց ստով չէ

ՀԱՄԼԵՏ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների՝ Լեռնային Ղարաբաղի նախագահական ընտրությունների վերաբերյալ հայտարարությունը հստակ ազդանշան է Բաքվին՝ ստեղծված իրողություններն անտեսելու անհնարինության մասին», ասում է Սեւծովյան-կասպյան տարածաշրջանի քաղաքական եւ սոցիալական հետազոտությունների ինստիտուտի աշխատակից **Անդրեյ Արեշեւը**՝ հիշեցնելով, որ համանախագահները հայտարարել էին, որ ճանաչում են Լեռնային Ղարաբաղի իշխանությունների՝ ընտրական ընթացակարգերի միջոցով սեփական բնակչության հասարակական կյանքը կազմակերպելու դեֆակտո ձգտման անհրաժեշտությունը: Արեշեւի գնահատմամբ՝ ԵԱՀԿ համանախագահների հայտարարությունը նոր ելեւէջներ է պարունակում, որոնք Ադրբեջանի ջղային արձագանքն են առաջացրել:

Տես էջ 2

Փարիզում է Նալբանդյանը, Մամեդյարովը՝ մի քանի օրից

Արեւելյան գործընկերության անդամ երկրների արտգործնախարարների հուլիսի 23-ի հանդիպմանը մասնակցելու նպատակով Բրյուսել էր մեկնել Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը:

ԱԳՆ հաղորդագրության համաձայն, այսօր արդեն երկօրյա այցով Նալբանդյանը կայցելի Փարիզ, որտեղ նախատեսված են հանդիպումներ Ֆրանսիայի արտաքին գերատեսչության ղեկավար Լորան Ֆաբիուսի եւ այլ պաշտոնատար անձանց հետ:

Ֆրանսիայի նորանշանակ արտգործնախարար Ֆաբիուսի հետ Նալբանդյանի հանդիպման օրակարգի մասին պաշտոնապես ոչ մի մանրամասն չի հաղորդվում, թեեւ ակնհայտ է, որ հարցերի շարքում ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունների ընթացքը եզրափակիչ կետերից չէ: Ավելի շուտ, այս հանդիպումը կարող է ունենալ զուտ ճանաչողական բնույթ, սակայն բանակցությունների քննարկման մասին է վկայում նաեւ այն հանգամանքը, որ Նալբանդյանի հետ հանդիպումից մի քանի օր անց՝ արդեն հուլիսի 30-ին Ֆաբիուսի հետ հանդիպման համար Փարիզում կլինի նաեւ Ադրբեջանի արտաքին գերատեսչության ղեկավար էլմար Մամեդյարովը:

Ա. Հ.

Նոր տեղեկություն Դինքի սպանության վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ, 23 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թուրքիայի Անվտանգության վարչության պաշտոնական կայքի վրա հարձակումից հետո հաքերային RedHack կազմակերպությունը հրապարակել է մի շարք գաղտնի փաստաթղթեր, ինչպես եւ խոստացել էր: Այդ փաստաթղթերից մեկում տեղեկություն է եղել նաեւ «Ակոս» պարբերականի նախկին խմբագիր Հրանտ Դինքի սպանության վերաբերյալ: Այս մասին տեղեկացնում է «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով «Ակոս» պարբերականը:

Հրապարակած տեղեկությունները 2006 թվականին Հրանտ Դինքին սպառնալիքներով նամակ ուղարկած Դեմիր ազգանվամբ մի մարդու մասին են, ում իրական անունը Օնուր Էսմեր է: Փաստաթղթում նշված է, որ հանցագործության օրը Էսմերը եւս Օգյուն Սամասթի հետ եղել է հանցանքի վայրում: Ըստ Անվտանգության վարչությունից վերցված տեղեկության՝ Էսմերը հանցագործության չիրականացման դեպքում պետք է սպաներ թե՛ Դինքին, թե՛ Սամասթին:

Նախքան Դինքի սպանությունը 2006 թվականին նույն Դեմիր ազգանվամբ մարդը սպառնալիքներով նամակ էր ուղարկել «Ակոս»-ի խմբագրին: Այդ կապակցությամբ Ստամբուլի Շիշլի շրջանի դատախազությունը հետաքննություն էր սկսել, որը, սակայն առկախվել էր, քանի որ թուրք ոստիկանները հայտարարել էին, թե Դինքին սպառնացած անձին «չեն կարողացել գտնել»:

Վարդան Օսկանյան. Այս ամենը քաղաքական դրդապատճառ ունի

Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը մերժել է ԱԺ ԲՀԿ խմբակցության պատգամավոր Վարդան Օսկանյանի փաստաբան **Տիգրան Աթանեսյանի** բողոքը: Փաստաբանը պահանջում էր վերացնել Ազգային անվտանգության ծառայությունից (ԱԱԾ) մայիսին 25-ին քրեական գործ հարուցելու որոշումը: Հիշեցնենք, որ ԱԱԾ քննչական վարչությունը քրեական գործ էր հարուցել հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով եկամուտներն իրականացնելու (փողերի լվացում) դեպքով:

Դռնփակ նիստից հետո դատավոր Մնացական Մարտիրոսյանը երեկ մերժեց փաստաբանի ներկայացրած բողոքը:

«Օսկանյանի պնդումը, որ սա քաղաքական հետապնդում է, դատարանը իր կայացրած որոշմամբ ուղղակի հաստատեց: Դատական նիստի ընթացքում քննիչն ու դատախազը չկարողացան ներկայացնել որեւէ լուրջ փաստարկ, որը կհիմնավորեր քրեական գործ հարուցելու որոշումը», հայտարարել է փաստաբան Աթանեսյանը:

Վարդան Օսկանյանի գնահատմամբ՝ եթե հարուցված քրեական գործը հիմքեր ունի, ապա պետք է լուրջ փաստարկներ ներկայացվեն:

«Դատարանի այսօրվա վճիռը կրկին ամրագրում է իմ համոզմունքը, որ հնարավոր չէ այլ եզրակացության հանգել, քանի որ այս ամենը քաղաքական դրդապատճառ ունի: Արդեն երկրորդ ամիսն է, ինչ գործ է հարուցվել բավական ծանր հոդվածով, բայց առ այսօր այդ կապակցությամբ որեւէ իրավական հիմնավորում առնվազն ինձ հայտնի չէ», հայտարարել է Օսկանյանը:

Հ. Հ.

Վարդան Ղուկասյանն ազատվել է ՀՀԿ մարզային կառույցի ղեկավարի պաշտոնից

Գյումրու իրավիճակը իշխանության ուշադրությունն է պահանջում

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Շաբաթ օրը ՀՀԿ փոխնախագահ, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի մասնակցությամբ կայացել է Հանրապետական կուսակցության Շիրակի մարզային խորհրդի նիստ, որտեղ Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանն իր դիմումի համաձայն ազատվել է այդ խորհրդի նախագահի պաշտոնից: Նրա փոխարեն ՀՀԿ մարզային կառույցի ղեկավար է ընտրվել Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Սահակ Մինասյանը:

Թերեւս ակնհայտ է, որ կուսակցական պաշտոնից Ղուկասյանի հեռանալը կապված է սեպտեմբերի 9-ին Գյումրիում կայանալիք ՏԻՄ ընտրությունների հետ, որտեղ, ըստ շրջանառվող լուրերի, քաղաքապետի պաշտոնում ՀՀԿ-ն չի պաշտպանելու նրա թեկնածությունը: Ինքը Ղուկասյանն իր այս հրաժարականի մասին նիստից հետո լրագրողների հարցին ի պատասխան մասնավորապես ասել է. «Ես ընդհանրապես իմ բնավորությամբ կուսակցական չեմ, ես ավելի՝ հոգեւոր եմ»: Քաղաքապետը չոր եւ նյարդային է արձագանքել որպես այդ պաշտոնում իր հնարավոր մրցակից Սամվել Բալասանյանի մասին հարցին, որի թեկնածությունը որոշել է պաշտպանել ԲՀԿ-ն:

Տես էջ 3

Արամ Ա կաթողիկոս. Սիրիահայերը կմնան Սիրիայի եւ նրա ժողովրդի կողին

Մեծի տանն Կիլիկիո **Արամ Ա կաթողիկոսն** Անթիլիասի իր նստավայրում ընդունել է Բերիո թեմի (Հալեպ) առաջնորդ **Շահան եպիսկոպոս Սարգսյանին** եւ Սիրիայի հայկական համայնքի այլ ներկայացուցիչների:

Հանդիպման ընթացքում Արամ Ա կաթողիկոսն ասել է, որ վերջին մեկ տարվա ընթացքում Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունները Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության ազգային կենտրոնական վարչության մտահոգության կենտրոնում են: Մեծի տանն Կիլիկիո Կաթողիկոսության տեղեկատվական կենտրոնի փոխանցմամբ՝ Արամ Ա կաթողիկոսը Բերիո թեմի առաջնորդ Շահան սրբազան Սարգսյանի եւ թեմի ազգային իշխանությունների միջոցով մշտապես իրազեկվում է սիրիահայ համայնքի իրավիճակի մասին:

Անկախ սրանից, Արամ Ա կաթողիկոսը, տարբեր առիթներով ե՛ւ անցած տարի, ե՛ւ անգամ անցած շաբաթ, ցանկություն է հայտնել մեկնել Սիրիա՝ հայրական հոգածությունն արտահայտելու հայ ժողովրդի զավակներին: Սակայն Սիրիայի համայնքային պատասխանատուները՝ հաշվի առնելով երկրի ներկայիս անկայուն իրավիճակը, նպատակահարմար չգտան վեհափառի այցելությանը, ասել է կաթողիկոսը հանդիպմանը՝ հավելելով, որ ինքը համայնքային պատասխանատուներին մշտապես հիշեցնում է իր ցանկության մասին, որպես հովվապետ այցելելու իր հոտին:

Արամ Ա-ի գնահատմամբ՝ հայ գաղութի ներքին միասնականության ամրապնդումը հրամայական անհրաժեշտություն է: Անկախ հանգամանքից, թե ինչպիսի ներքին տարակարծություններ եւ մոտեցումներ կան, Սիրիայի ներսում ստեղծված ներկայիս մտահոգիչ իրավիճակում համայնքը պետք է գործնականորեն արտահայտի իր միակամությունն ու որդեգրի հավասարակշիռ կեցվածք՝ ինչպես դա տեղի ունեցավ լիբանանահայության պարագայում՝ Լիբանանում ստեղծված տագնապալի իրողությունների ժամանակաշրջանում:

Վեհափառը, նկատի ունենալով Սիրիայում տիրող տնտեսական ծանր իրավիճակը, անհրաժեշտ է համարում օժանդակել կարիքավոր ընտանիքներին: Որպես Միջին Արեւելքի եկեղեցիների խորհրդի նախագահ, վեհափառն ամիսներ առաջ անհրաժեշտ ցուցումներ է տվել Դամասկոսում գործող Միջին Արեւելքի եկեղեցիների խորհրդի գրասենյակին: Նա հրահանգել է կապ պահպանել հիշյալ գրասենյակի հետ՝ հայ ընտանիքներին անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու նպատակով:

Նա կարեւորել է նաեւ հոգեւոր ու համայնքային պատասխանատուների կապը կողմերի հետ՝ ընդգծելով, որ հեռու մնան բացահայտ քարոզչական քայլերից եւ միակողմանի մոտեցումներից:

Արամ Ա-ն խնդրել է, որ բոլոր կողմերի հետ հարաբերություններում Սիրիայում տիրող իրավիճակի վերաբերյալ պետք է հիմք ծառայի հետեւյալ մոտեցումը: Հայ ժողովուրդը՝ Սիրիայում եւ նրա սահմաններից դուրս, երախտապարտ է սիրիական հայրենիքին եւ ժողովրդին, որովհետեւ թուրքական ջարդերից հետո Սիրիան հայ գաղթական ժողովրդի զավակներին ընդունեց եւ իր հայրենիքն ու հացը կիսեց նրանց հետ:

«Վարչակարգերը մնայուն չեն, մնայունը սիրիական հայրենիքն է, իր ժողովուրդն ու նրա գերագույն շահերը», ասել է վեհափառը՝ անհրաժեշտ համարելով շրջապատին հիշեցնել, որ Սիրիայում հաստատված հայերը Սիրիայի քաղաքացիներ են եւ կշարունակեն կազմված մնալ սիրիական հայրենիքին՝ տեր կանգնելով իրենց պատավորություններին եւ իրավունքներին՝ նույնիսկ ներկայիս դժվար պայմաններում:

Սիրիայի հայությունը դեմ է արտագաղթին: Սիրիահայությունը կազմակերպված գաղութ է եւ կմնա այդպիսին՝ միշտ սիրալիր հարաբերություններ ու համագործակցություն ունենալով բոլոր համայնքների հետ: Սիրիայի հայությունը կմնա Սիրիայի եւ նրա ժողովրդի կողքին, ասել է նա:

Վեհափառը հրահանգել է, որ թեմական, համայնքային եւ կուսակցական մակարդակներում խորհրդակցություններ տեղի ունենան, որպեսզի մոտեցումներն ու աշխատանքները լինեն կազմակերպված եւ ներդաշնակ:

Սիրիահայ համայնքի ներկայացուցիչներն էլ հայտարարել են, որ առայժմ սիրիահայերի զանգվածային արտագաղթ չի նկատվում:

Հիշեցնենք, որ Սիրիայում արդեն 16 ամիս շարունակվում են բախումները, վերջին շաբաթների ընթացքում Սիրիայում քաղաքացիական պատերազմ է սկսվել: Բախումների հետեւանքով 6 հայ է զոհվել: Նրանցից 3-ը զինվորներ են, երեքը՝ սովորական քաղաքացիներ: Երեք օր առաջ Դամասկոսում անհայտ պայմաններում սպանվել է հայ ոսկերիչ, 1964 թ. ծնված Անդրանիկ Արվալջյանը:

ՀԱՍՄԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ներմուծված հոգեւոր «փրկիչներ»

Երեւանի Սբ Երրորդություն եկեղեցու հոգեւոր հովիվ **Տ. Եսայի քահանա Արթենյանը**, ներկայացնելով աղանդների քայքայիչ գործունեությունը, երեկ նշեց, որ եկեղեցին այդ խնդիրը միշտ իր ուշադրության կենտրոնում է պահում եւ ակտիվ գործունեություն է ծավալում, մասնավորեցրեց. «Մի խումբ խուլեր, որոնք նախկինում աղանդավորական կազմակերպությունների անդամ էին, այսօր արդեն հարում են Հայ առաքելական եկեղեցուն»:

Քահանան, անդրադառնալով քննադատություններին, թե եկեղեցու կողմից քարոզչություն չկա, նշեց, որ շաբաթը երկու անգամ քարոզչություն է իրականացվում խուլերի համար. «Ժեստերի լեզվով պատրաստել ենք պատարագի DVD տարբերակ, աշխատանքներ են տարվում ժեստերի լեզվով ներկայացնելու նաեւ Ավետարանի DVD տարբերակը»:

Տեր Եսային ընդգծեց. «Աստվածաշունչ ձեռք բերելիս ուշադիր եղեք հատկապես Եհովայի վկաների թարգմանությանը, քանի որ նրանք փոխում են բառերը, նախադասություններ են այլ կերպ մեկնաբանում: Նրանց գրքերում առկա են «Ն.Ա.Թ.» տառերը, որոնք «Նոր աշխարհի թարգմանություն» բառերի հապավումն են»:

Տ. Եսայի քահանա Արթենյանը աղանդների դեմ պայքարելու արդյունավետ միջոց է համարում պետական մոտեցումն այդ խնդրին:

Ինչո՞վ է գրավում աղանդը մարդկանց՝ շա՞հ, թե՞ փրկության հույս, ահա այս բազմաչարչար հարցին ի պատասխան քահանան նշեց. «Աղանդները մարդկանց հաճախ գրավում են, քանի որ քարոզում են, թե ինչպես ցանկանում ես՝ ապրիր, միեւնույն է, կփրկվես: Յուրաքանչյուր աղանդավորական ուսմունքի մեջ փրկության համար ջանք չի թափվում, օրինակ՝ «Կյանքի խոսք»-ի քարոզներին ասվում է հետեւյալ նախադասությունը՝ «Մեզ աբադոկով (նկատի ունեն սրբերի լուսապսակը) սրբեր պետք չեն, սուրբը դուք եք»:

Շատ ու շատ մարդիկ այցելում են աղանդավորական կազմակերպություններ ֆինանսական աջակցության ակնկալիքով:

Կցանկանանք անդրադառնալ մի դեպքի եւս, որին ականատես ենք եղել. «Կուրսընկերուհիներիցս մեկը, որը հարում է «Կյանքի խոսք»-ին, պնդում էր, որ գործում է Հայ առաքելական եկեղեցուն կից (Մ. Հ. - նման թյուրըմբռնում շատերն ունեն)»: Ահա եւս մի տարբերակ մարդկանց խաբելու, թեեւ տարբերակները շատ են: Զգույշ եղե՛ք, որպեսզի նման կերպ Ձեզ չտանեն իրենց շարքերը:

Ինչ վերաբերում է «աղանդ» եզրույթին, քահանան ընդգծեց, որ դա վիրավորական խոսք չէ. «Աղանդ են համարվում բոլոր կրոնական կազմակերպությունները, որոնք շեղված են Ավետարանի ճշմարիտ վարդապետությունից, սակայն այն չի վերաբերում քրիստոնեական եկեղեցիներին»:

Նշենք, որ նման խնդրի բախվեց «Իրավունք» թերթը, երբ «Կյանքի խոսք»-ի մասին հոդվածներից մեկում «աղանդ» եզրույթն էր օգտագործել, եւ ահա թերթի դեմ հարուցվեց դատական գործ:

Քահանայի խոսքով, Հայաստանում կա 350 000 ոչ Առաքելական եկեղեցու հետեւորդ, դրանցից 190 000-ը կաթոլիկներ են, 40000-ը՝ եզդի, 4000-ը՝ ասորի, 3000-4000-ը ռուս ուղղափառ եկեղեցու հետեւորդներ են, իսկ մնացած 100 000-ը՝ աղանդավոր, թեեւ ճշգրիտ տվյալներ չկան, քանի որ իրենք հստակ տվյալներ չեն ներկայացնում:

Տեր Եսային մեծ ուրախությամբ նշեց, որ տարեցտարի երիտասարդների մեջ ավելանում է հոգեւորական դառնալու ցանկությունը, եւ այժմ շատ քիչ ընտանիքներ են ընդդիմանում իրենց երեխաների որոշմանը:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԱՐՑԱԽԱՆՔ

ԱՄՆ կոնգրեսականները շնորհավորել են Բակո Սահակյանին

«Այս ընտրությունները դարձան մեր ժողովրդի հաղթանակը իրավական պետության կառուցման եւ ազգային իդեալների իրականացման ճանապարհին, նրա բարձր քաղաքացիական կեցվածքի եւ իմաստնության եւս մեկ դրսեւորում: Արցախի ժողովուրդը կրկին վերահաստատեց իր հավատարմությունը միջազգային նորմերին եւ սկզբունքներին եւ ազատ, անկախ ու արդար պետություն կառուցելու ուղու անշրջելիությանը», երեկ հայտարարել է ԼՂՀ նորընտիր նախագահ Բակո Սահակյանը: Նա շեշտել է, որ իր համար չկա ավելի մեծ ու պատավորեցնող ուժ, քան արցախահայության վստահությունն ու պատասխանատվությունը Արցախի ապագայի հանդեպ:

«Մենք պատրաստակամ ենք ու վճռական այդ ապագայի կերտման գործում»: Սահակյանը նշել է, որ հինգ տարվա ընթացքում ԼՂՀ-ում իրականացվել է մեծածավալ աշխատանք, սակայն անելիքները շատ են: «Կարվի հնարավոր ամեն ինչ պետության հետագա զարգացման ու զորացման, պաշտպանության բանակի մարտունակության ամրապնդման, մեր ժողովրդի կենսամակարդակի շարունակական բարձրացման, Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ընդլայնման ու խորացման ուղղությամբ: Վստահ եմ, որ համատեղ ուժերով մենք կկարողանանք հաջողությամբ իրականացնել մեր համազգային նպատակներն ու ձգտումները», հայտարարել է Բակո Սահակյանը:

Երեկ ԼՂՀ ժողովրդին եւ Հայկական երկրորդ հանրապետության նախագահին շնորհավորել են ԱՄՆ կոնգրեսականներ Հովարդ Բերմանը, Ֆրենկ Փալոնը եւ Էդ Ռոյսը: Հորվարդ Բերմանը հաջողություն է մաղթել ղարաբաղյան հիմնախնդրի վերջնականապես լուծման հարցում՝ հարգելով Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը: Նա ընդգծել է, որ անցկացված ընտրությունները ժողովրդավարական գործընթացներն ամրապնդելուն ուղղված հերթական քայլն են:

Էդ Ռոյսը շեշտել է, որ ընտրական համակարգն աշխատում է: Քվեարկությունն ապացուցեց, որ ժողովրդավարությունը գործում է Լեռնային Ղարաբաղում:

Հ. Հ.

Ռուս փորձագետներ. Արեւմուտքին երեւի ձեռնտու կլիներ, որ...

1-ին էջից

«Դա օրինաչափ է, նաեւ Բաքվին ուղղված հստակ ազդանշան, որ չի կարելի անտեսել այն իրողությունները, որոնք ձեւավորվել են տարածաշրջանում եւ արդեն 20 տարվա կյանք ունեն»:

Արեւելեւ ու ԱՊՀ երկրների ինստիտուտի Կովկասի բաժնի վարիչ Միխայիլ Ալեքսանդրովը մասնակցել են ԼՂՀ ընտրություններին որպես դիտորդական խմբի անդամներ: Նրանք համակարծիք են՝ ԼՂՀ-ում ընտրություններն անցկացվել են արդար, բաց եւ թափանցիկ:

«Անգամ այն գյուղերում, որտեղ 20 տարի միջազգային դիտորդի չէին տեսել՝ ամեն ինչ պատշաճ մակարդակով էր կազմակերպված, իսկ ընտրողների մասնակցության նման բարձր ցուցանիշ նույնիսկ նախկին ԽՍՀՄ որոշ երկրներում դեռ չի արձանագրվել»:

Բակո Սահակյանի հաղթանակն, ըստ քաղաքագետների, ապացուցեց, որ Արցախում վերջին 5 տարիներին դրական իմաստով շատ բան է փոխվել: Միաժամանակ, փաստը, որ Վիտալի Բալասանյանի օգտին քվեարկել է ընտրողների 1/3 մասը, խոսում է այն մասին, որ կան չլուծված խնդիրներ:

Ռուս փորձագետները համոզված են, որ Արցախում այս ընտրություններից հետո մրցակցային քաղաքական դաշտ է ձեւավորվելու:

«Ընդդիմությունն իշխանության հետ ինչ-որ հարցերում համագործակցելու է, ինչ-որ հարցերում՝ ոչ: Սակայն խորքային եւ ամենագլխավոր հարցերում նրանք համագործակցելու են, քանի որ ապագայի հարցերում թեկնածուների դիրքորոշումները համընկնում են»:

Ռուս փորձագետները համոզված են, որ Արեւմուտքը միշտ էլ Ադրբեջանի կողմն է բռնել: Նրանց խոսքով՝ ԵՄ-ն, ՆԱՏՕ-ն եւ նրանց գաղափարակից երկրները չէին կարող Արցախի ընտրությունները ճանաչելու կոչեր անել, որովհետեւ դրանով կվտանգեին ադրբեջանական սցենարն ու պնդումները, թե Արցախը «ադրբեջանական օկուպացված տարածք է»:

«Դա հիմա Արեւմուտքին պետք չէ, որովհետեւ դրանով Ադրբեջանը դիտվում է, որպես հարթակ Սիրիայի եւ Իրանի ռազմական գործողություններ սկսելու դեպքում: Արեւմուտքին երեւի ձեռնտու կլիներ, որ Ղարաբաղում զինվորական դիկտատուրա լիներ, չէ՞, լեգիտիմ իշխանությունները նրանց ձեռնտու չեն, նրանք ուզում են, որ ժողովրդավար ԼՂ-ն ավտորիտար Ադրբեջանին հանձնեն, չէ՞», ասում է Ալեքսանդրովը:

Հարցին, թե երբ Ռուսաստանը կճանաչի Արցախի անկախությունը, Ալեքսանդրովն ասաց, որ դա կլինի Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ի եւ ԱՄՆ-ի դիրքերի թուլացան հաշվին, երբ ՌԴ-ն ավելի ուժեղ կլինի տարածաշրջանում:

Նրանց ներկայացմամբ՝ Աբխազիայի եւ Հարավային Օսիայի հարցերը չպետք է նմանեցնել Արցախի խնդրին, Ռուսաստանը ճանաչեց այդ պետությունները, որովհետեւ Սակաշվիլին հարձակվեց նրանց վրա:

Արեւելեւ մեկնաբանությամբ՝ եթե առաջ Հայաստան-Արցախ միավորմանը կողմ էր արցախահայության հիսուն տոկոսը, ապա այսօր հայկական երկու հանրապետությունների վերամիավորումը ցանկացողների թիվը շատացել է:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 581841
060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Էկոնոմիկայի նախարար. «Վերականգնելու ենք Հայաստանի արդյունաբերությունը նոր հենքի վրա»

2012-ի սոցիալ-տնտեսական կիսամյակային ցուցանիշներն ու Հայաստանի տնտեսության վիճակին երեկ հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ անդրադարձավ էկոնոմիկայի նախարար **Տիգրան Դավթյանը**: Նրա գնահատականով՝ տնտեսության վիճակը դրական է եւ լավատեսական: 7,8 տոկոս տնտեսական ակտիվության աճից բացի նա առանձնացրեց արդյունաբերության 13 տոկոս աճը, գյուղատնտեսության 8 տոկոս աճը, արտահանման ծավալների ավելացումը 13,5 տոկոսով, ծառայությունների աճը՝ սկսած հեռահաղորդակցությունից մինչեւ զբոսաշրջության ոլորտ: Միակ ճյուղը, որ նվազում է արձանագրում, մնում է շինարարությունը: Այդուհանդերձ, նախարարի գնահատմամբ, դրական դինամիկան կդահպանվի հաջորդ կիսամյակում, ինչի համար լուրջ հիմք են այդ ընթացքում իրագործվելիք ծրագրերը:

Տիգրան Դավթյանը շեշտեց, որ արդյունաբերության ոլորտում սկսվել է արտահանմանն ուղղված ռազմավարության իրականացումը, մշակվել են 5 ուղղություններ աջակցման ծրագրերը: Դրանք են՝ կոնյակագործություն, գինեգործություն, դեղարտադրություն, ոսկերչություն, ճշգրիտ ճարտարագիտություն: Քննարկվում է նաեւ թեթեւ արդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը: Նախարարը համոզմունք հայտնեց, որ վերականգնելու ենք Հայաստանի արդյունաբերությունը, բայց արդեն նոր հենքի եւ ժամանակակից պահանջների հիման վրա:

Տիգրան Դավթյանը հիշեցրեց, որ այս տարի ականատես եղանք նոր ձեռնարկությունների բացմանը, եւ ասաց, որ այդ գործընթացը կշարունակվի: Նա հիշատակեց նոր բացված կամ ընդլայնված մի քանի ձեռնարկություններ՝ «Ասկե գրուպ», «Եվրոթերմ», «Արարատ» սննդի կոմբինատ, «Աստրա կրիսալս», «Արմենիա վայն» եւ այլն: Այս եւ բազմաթիվ այլ ձեռնարկությունների պետական տարբեր աջակցություններ են ցուցաբերվել՝ հարկերի հետաձգում, ժամանակավոր ներմուծման ռեժիմի տրամադրում, վարկավորում եւ այլն: 25 ընկերությունների 29 ներդրումային ծրագրերով կատարվել են ավելի քան 100 մլրդ դրամի ներդրումներ: Էկոնոմիկայի նախարարի հավաստիացմամբ, եթե չկիրառվեր ավելացված արժեքի հարկի հետաձգման ռեժիմը այս ձեռնարկությունների նկատմամբ, արդա նրանց մի մասը կամ չէր կատարի այս ներդրումները, կամ կկատարեր ոչ այս ծավալներով: Նա նաեւ տեղեկացրեց, որ եկող տարվանից 2009-ին հետաձգված ավելացված արժեքի վճարումները վերոնշյալ ընկերությունները կսկսեն կատարել: Միաժամանակ, Տիգրան Դավթյանը հնարավոր համարեց, որ ապագայում նվազեցվի ներդրումների համար ավելացված արժեքի հարկի հետաձգման շեմը եւ ավելի ցածր սահմանվի ներկայիս 300 մլն-ից, որպեսզի ավելի փոքր ընկերությունները նույնպես հնարավորություն ունենան օգտվելու այս հնարավորությունից: Նախարարը նաեւ տեղեկացրեց, որ ավելացված արժեքի հարկի հետաձգման ռեժիմից օգտվող որոշ ընկերությունների կողմից ծրագրերի իրականացման հետ կապված հապաղումներ կան, որոնք շուտով կվճարվեն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտը նույնպես սկսվելու է համակարգվել էկոնոմիկայի նախարարության կողմից: Նախարարի ներկայացմամբ՝ այստեղ նույնպես դրական դինամիկա կա: Նա հիշատակեց Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի շենքի շինարարությունը, որին զուգահեռ նման կենտրոն է կառուցելու «Դը լինկ» ընկերությունը: Տգրան Դավթյանը հայտնեց նաեւ, որ այժմ Համաշխարհային բանկի հետ քննարկվում են Հայաստանի այլ մարզերում, որտեղ ՏՏ զարգացման ներուժ կա, եւս 1-2 նման տեխնոլոգիական կենտրոններ կառուցելու հարցերը եւ Հայաստանում տեխնոլոգիական կենտրոնների ցանց ունենալու հեռանկարը:

«**Ազգի**» հարցերը՝ էկոնոմիկայի նախարարին, հետեւյալն էին. «Ինչո՞վ եք բացատրում արդյունաբերության ոլորտում մայիսին եւ հունիս ամիսներին նախորդ ամսվա նկատմամբ որոշակի նվազումը եւ մինչեւ տարեվերջ արդյունաբերության մեջ արձանագրված 13 տոկոս աճի տեմպը կպահպանվի՞»: Տիգրան Դավթյանը պատասխանեց, որ մեր տնտեսության մեջ սեզոնայնությունը մեծ է, եւ ավելի ճիշտ է ղեկավարվել տարվա սկզբից արձանագրված ցուցանիշներով: Նրա հավաստիացմամբ՝ մի քանի ներդրումային ծրագրերի սկիզբը կամ հետաձգումը էականորեն կարող են ազդել այս կամ այն ուղղությամբ ամսվա ցուցանիշի վրա: Նախարարն այն կարծիքը հայտնեց, որ սովորաբար տարվա երկրորդ կեսն ավելի ակտիվ է լինում Հայաստանի տնտեսության համար: Նրա համոզմամբ՝ նկատի ունենալով իրականացվելիք ծրագրերը, արդյունաբերական աճի ցուցանիշները կպահպանվեն: Ռիսկերը կարող են լինել միայն միջազգային տնտեսությունից, որտեղից ստացվող ազդակները, սակայն, այս պահին շատ զգուշավոր լավատեսություն են ներշնչում:

«Իրատեսակա՞ն է այս տարվա համար 7 տոկոս տնտեսական աճի ցուցանիշի ապահովումը» հարցին պատասխանելով՝ Տիգրան Դավթյանը նույն հիմնավորումը տվեց, ասելով, որ ռիսկերը կարող են լինել միայն միջազգային տնտեսությունից, իսկ իրենք՝ մասնավոր հատվածի հետ միասին, ամեն ինչ պետք է անեն, որ ունենանք աճի այդ տեմպերը:

Եվրոմիության հետ հարաբերությունների մասին խոսելով էկոնոմիկայի նախարարն ասաց, որ Հայաստանը, Վրաստանը եւ Մոլդովան ԵՄ-ի պահանջած բարեփոխումներն ավելի արագ են իրականացնում, քան Ուկրաինան, Բելառուսը եւ Ադրբեջանը: Դրա շնորհիվ առաջին երեք երկրներն ավելի շատ աջակցություն են ստանում, քան մյուս երեք երկրները:

«Ձերմուկում զբոսաշրջության զարգացման ծրագրին չի՞ խանգարի հանքերի արդյունահանումը ընդամենը 12 կմ հեռավորության վրա» հարցին պատասխանեց էկոնոմիկայի փոխնախարար **Արա Պետրոսյանը**: Նա ասաց, որ պետք է կարողանալ զուգակցել տուրիզմն ու հանքարդյունաբերությունն այնպես, որ դրանք չխանգարեն միմյանց, ինչպես արվում է բազմաթիվ երկրներում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Շտապօգնության կանչերն ավելացել են

Նախորդ տարվա համեմատությամբ 2012-ին «Շտապօգնության» կանչերն ավելացել են: Եթե ամբողջ 2011-ի ընթացքում հիվանդանոցը սպասարկել է 85 132 կանչ, ապա 2012-ի միայն առաջին 6 ամիսների ընթացքում կանչերի քանակը կազմել է 97 884:

«Շտապօգնություն» ՓԲԸ-ի տնօրեն **Թագուհի Ստեփանյանը** նշում է, որ կանչերի մեջ գերակշռում են սիրտ-անոթային ու օնկոլոգիական հիվանդությունների դեպքերը: Սակայն չի բացառում եւ անտեղի կանչերը, երբ նույն մարդն օրվա մեջ մի քանի անգամ կանչում է շտապօգնություն, փոխանակ գնալու հիվանդանոց կամ դիմելու իր ընտանեկան բժշկին: Սրա պատճառներից մեկն էլ վճարման հարցն է. շտապօգնությունը սպասարկում է անվճար, իսկ հիվանդանոց գնալու դեպքում պետպատվերի արտոնություն չունեցող հիվանդը պետք է վճարի: Հետեւաբար, եթե հիվանդի վիճակը ծանր չէ, նա գերադասում է մնալ տանն ու կանչել շտապօգնություն, որը տնային պայմաններում կթեթեւացնի իր վիճակը:

Թագուհի Ստեփանյանն ասում է, որ օրվա մեջ 13 կրկնակի կանչ են ունենում: Իսկ շտապօգնությունն իրավունք չունի կանչերը մերժելու, հետեւաբար, անկախ հասցեատիրոջից, ծառայությունը պետք է սպասարկի բոլորին:

Կոնկրետ «Շտապօգնության» հիվանդանոցը սպասարկում է Երեւան քաղաքին, իհարկե լինում են նաեւ միջմարզային կանչեր, որոնց սպասարկումը վճարովի է՝ ի տարբերություն Երեւանից ստացված կանչերի:

Իսկ կաբառակերության վերաբերյալ տիկին Ստեփանյանն ընդգծում է՝ կաբառակերության դեպքեր եղել են, բայց վերցնողներն աշխատանքից ազատվել են:

Երեկվա ասուլիսի ժամանակ տիկին Ստեփանյանը, սակայն, նշեց մի քանի հանգամանքներ, որոնց դեպքում Երեւանում էլ սպասարկումը լինում է վճարովի: Օրինակ, երբ հարկ է լինում տանել հիվանդին հիվանդանոց շտապօգնության մեքենայով, քանի որ հիվանդն այլ մեքենայով պարզապես գնալ չի կարող, այս դեպքում ծառայությունը վճարովի է, կամ երբ մարդը մահանում է տանը, բացառությամբ դատական դեպքերի, հանգուցյալի տեղափոխումը կատարվում է վճարումով (վճարում են 5000 դրամ):

Իսկ եթե շտապօգնության մեքենան կանչից հետո հիվանդին տանում է համապատասխան հիվանդանոց, արդյոք հիվանդանոցում ստուգման ու խորհրդակցության համար իրավունք ունե՞ն գումար վերցնելու: Պատասխանելով «**Ազգի**» հարցին՝ տիկին Ստեփանյանը նշում է, որ շատերը հաճախ կանչում են շտապօգնություն, որպեսզի հիվանդանոցից էլ օգտվեն անվճար, սակայն հիվանդանոցներում միշտ չէ, որ շտապօգնության տարած հիվանդին սպասարկում են անվճար: Դա կախված է նրանից՝ արդյոք հիվանդն ունի պետպատվերով սպասարկվելու արտոնություն: Ամեն դեպքում, Թագուհի Ստեփանյանը խորհուրդ տվեց հարցը ճշտել նաեւ առողջապահության նախարարությունից:

ԱՆ Պետական առողջապահական գործակալության պետ **Արա Տեր-Գրիգորյանը** մեր հետ հեռախոսազրույցում ասաց՝ եթե հիվանդը տեղափոխվում է հիվանդանոց շտապօգնության մեքենայով, դա դեռեւս չի նշանակում, որ նրա ստուգումն ու խորհրդատվությունը պետք է արվեն պետպատվերով: «Նման դեպքերում յուրաքանչյուր հիվանդի անվճար սպասարկելու օրենք գոյություն չունի», հավելեց Արա Տեր-Գրիգորյանը:

Թագուհի Ստեփանյանը նշում է մի ուրիշ հանգամանք էլ, որ շտապօգնության բժիշկները հիվանդի տանը երկար մնալու իրավունք չունեն՝ համաձայն ընդունված չափորոշիչի կարող են մնալ միայն 20 րոպե, սակայն մեր հիվանդները հաճախ առանց հասկանալու դժգոհում են, որ բժիշկները երկար չեն մնում:

Հիմա «Շտապօգնության» ենթակայության տակ գործում է 35 մեքենա, կանչերի հագեցված ժամանակն էլ, ըստ տնօրենի, երեկոյան ու գիշերային ժամերն են:

Վերջում կրկին անդրադառնալով վիճակագրությանը՝ Թ. Ստեփանյանն ավելացնում է, որ կանչերը զերծ չեն նաեւ մահվան ելքերից, դրանց մեջ ամսական գրանցվում է միջինը 5-7 մահվան դեպք:

Ի. Պ.

ԳՅՈՒՄՐԻ

Բնակարանների բաշխումն ավարտվում է, անօթեւաններ դեռ մնում են

Անցած ուրբաթ օրը Գյումրիում՝ Վարդան Աճեմյանի անվան պետթատրոնի դահլիճում տեղի է ունեցել «Մուշ-2» եւ «Անի» թաղամասերում կառուցվող բազմաբնակարան շենքերի 640 մեկսենյականոց բնակարանների բաշխման վիճակահանությունը: Այդ շենքերը կառուցվել են քաղաքում երկրաշարժից անօթեւանների համար իրականացվող պետական բնակարանաշինական ծրագրի երկրորդ փուլով: 4, 3 եւ 2-սենյականոցների բաշխման վիճակահանությունը կայացել էր քիչ ավելի վաղ՝ անցած երկու ամիսների ընթացքում:

Ըստ ընդունված կարգի, վիճակահանությանը նախ մասնակցել են իրենց կազմում առաջին եւ երկրորդ խմբի հաշմանդամ ունեցող այն ընտանիքները, որոնք ցանկացել են բնակարան ստանալ շենքերի առաջին հարկում: Հաշվի առնելով նաեւ տարբեր մակերեսներով մեկսենյականոցների առկայությունը, առանձին փուլերով վիճակահանություն է իրականացվել 2 եւ ավելի անձերից բաղկացած ընտանիքների եւ 1 անձից կազմված ընտանիքների միջեւ: Նախորդ վիճակահանություններին ինչ-ինչ պատճառներով չբաշխված տարբեր սենյականոց 38 բնակարանների վիճակահանությունն անցկացվելու է հուլիսի 27-ին:

Գյումրիում երկրաշարժից անօթեւանների համար իրականացվող պետական բնակարանաշինական ծրագրի նախորդ՝ առաջին փուլով «Մուշ-2» թաղամասում կառուցվել եւ բաշխվել է 1056 բնակարան: Ներկա երկրորդ փուլով հիշյալ երկու թաղամասերում ավարտին է մոտենում 38 շենքերի կառուցումը՝ 1756 բնակարաններով, որոնք նախատեսվում է շահագործման հանձնել սեպտեմբեր ամսին:

Այս ծրագրի ավարտից հետո, եկող տարի, ծրագրվում է անօթեւան ընտանիքների համար կառուցել եւս 400-420 բնակարան:

Գ. Մ.

Վարդան Ղուկասյանն...

1-ին էջից

Պատշաճական տեղեկատվության բացակայության պայմաններում վերջին երկու-երեք օրերին խոսակցությունների մակարդակով, նաեւ հանրապետության մամուլում ու այլ լրատվամիջոցներում տագնապահարույց տեղեկություններ են շրջանառվում հիշյալ նիստից հետո քաղաքապետի որդու ու նրա շրջապատի ագրեսիվ պահվածքի, մասնավորապես՝ նրանց կողմից Բալասանյանի տնից ոչ հեռու հնչեցված սպառնալիքների («Չեք վայելելու»), մարդկանց ահաբեկելու գործողությունների մասին, հրապարակվել է նաեւ «մի խումբ գյումրեցիների» անունից բաց նամակ հանրապետության իշխանություններին՝ օգնության կոչով: Իսկ քաղաքապետարանի մամուլի քարտուղարը «Արմենպրեսի» թղթակցին ասել է, թե այս ամենը ընդամենը տեղեկատվական տեսք է...

Կարծում ենք՝ հանրապետության իշխանությունը պետք է Գյումրու ապագա տեղական իշխանության ձեւավորման հետ կապված իր դիրքորոշման հարցում հրապարակային գործի, կրքերի հնարավոր բորբքումը կանխելու համար ամեն ինչ անի Գյումրու օրերապիվ իրավիճակը հանգիստ պահելու ու լիարժեք վերահսկելու համար, իսկ նրա պատկան կառույցները քաղաքի բնակչությանը հանգստացնելու համար պետք է հանդես գան դա հավաստող հայտարարությամբ:

ԱՄԲՈՂՋ

11-րդ դարի կեսերին հայ ազգն իր հազարամյա օրրան Հայկական բարձրավանդակում (այժմ՝ Թուրքիայի ողջ արևելյան տարածքը) ենթարկվեց ֆչվոր ցեղերի՝ ռազմատենչ թուրք-սելջուկների ասպատակությանը:

Մեծավոր Արևելքի հսկայական տարածքներում հետագայում (14-րդ դարի սկզբին) ստեղծված Օսմանյան կայսրությունը պատմական կարճ ժամանակահատվածում կարողացավ ոչ միայն ընդօրինակել, այլեւ իրենը հռչակել եւ իրեն վերագրել այդ տարածքի հնաբնակ, քաղաքակիրթ ազգերի եւ ժողովուրդների հնադարյան հարուստ մշակույթը, ինչպես նաեւ նրանց պետական ու տնտեսական համակարգի կառավարման մեծ փորձն ու հմտությունը:

Գաղտնիք չէ, որ Թուրքիայի կայացմանը, որպես պետության, իր անհերքելի մեծ դերակատարությունն է ունեցել նաեւ տեղաբնակ փական շահերից ելնելով, ամեն ինչ գործադրեցին՝ վիժեցնելու այն եւ նորանկախ Հայաստանի առաջին հանրապետությունը բաժանեցին իրենց միջեւ, ինչը, ցավոք հետագայում «ուսանելի» նախադեպ դարձավ Մոլոտով-Ռիբենտրոպ նենգ ու դավադիր պայմանագրին:

Ավելին՝ Հայաստանի խորհրդայնացման իսկ տարիներից սկսած՝ հավատալով Թուրքիայի կեղծ խոստումներին, նենգ եւ խորամանկ խարդավանքներին (որ վերջինս Ռուսաստանի աջակցությամբ պատրաստ է ողջ Մեծավոր Արեւելքի ժողովուրդներին հավաքել Հոկտեմբերյան հեղափոխության դրոշի ներքո), խորհուրդների ղեկավարները շարունակում էին Թուրքիային զոհաբերել հայկական նոր տարածքներ «մի թիզ» մնացած Հայաստանից, այս անգամ՝ Լեռնային Ղարաբաղն (Արցախը) ու Նախիջեւանը, նվիրելով թուրքական մյուս պետությանը՝ Ադրբեջանին, որտեղ էլ թեթում, ապա Բաքվում պետական մակարդակով սկսեց հայերի հերթական ջարդը: Դա թերեւս 1915-23 թթ.՝ Թուրքիայում եւ 1918-20 թթ.՝ Ադրբեջանում հայերի «կիսաս» մնացած ցեղասպանությունը լրացնելու եւ շարունակելու մեծ տենչանքն էր: Եվ իրոք, միայն թուրքերը կարող էին՝ իրենց հատուկ, կատարելագործված մարդասպանի «վարպետությամբ» իրագործել այն, ինչ կատարվեց Սումգայիթում եւ Բաքվում...

Չբավարարվելով այդ հրեավոր, դաժան կոտորածներով, Ադրբեջանի ղեկավարությունը 1991-ին լայնամասշտաբ պատերազմական գործողություններ ծավալեց Արցախի անզեն ժողովրդի դեմ:

Չնայած մարդկային մեծ զոհերին՝ Արցախի ժողովուրդը կարողացավ ծնկի բերել Ադրբեջանին եւ ազատագրել Արցախի մեծ մասը: Միայն Ռուսաստանի «դիվանագիտական միջամտությամբ» կանգգային հանրության ուշադրությունից, դրանով իսկ ընդհանրապես խուսափելու ցեղասպանության ծանր պատասխանատվությունից:

Ցավալի է եւ անարդար, որ այսօր՝ ինչպես Արցախի ինքնորոշման միջազգային ճանաչման, այնպես էլ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցերի լուծումը մեծ առումով պայմանավորված է մեծ տերությունների եւ նրանց միջեւ գոյություն ունեցող միջազգային հարաբերությունների առկա իրավիճակից եւ հեռագա հնարավոր դրսեւորումներից, ինչպես նաեւ՝ մեր տարածաշրջանում նրանց՝ ներկայիս եւ հեռանկարում ունենալիք շահերից՝ որոնք դրդում եւ հարկադրում են նրանց տուրք տալ ադրբեջանական իշխանությունների պահանջներին՝ հայ ժողովրդի արյան գնով ազատագրած սեփական պատմական տարածքները երկրորդ անգամ, հենց այնպես՝ «սկուտեղի» վրա նվիրել հայերի ցեղասպանությունն իրագործած մի ազգի, որն այսօր էլ սպառնում է նրան՝ պատերազմական նոր ագրեսիայով:

Այսօր ազգամիջյան խնդիրներ ունեցող ժողովուրդները հասկացել են, որ միջազգային բարձր ատյաններում նույն հարցի լուծման համար գոյություն ունեն երկակի ստանդարտներ:

Մեզ համար դրա ցայտուն օրինակներից են մոտ մեկ դար առաջ իր սեփական օրրանում իրագործված Հայոց ցեղասպանության այսօր դեռեւս ճանաչված չլինելու եւ այդ նույն ցեղասպանությունից 25-30 տարի ուշ, այն էլ օտար երկրի տարածքում իրագործված հրեաների ցեղասպանության վաղուց արդեն ճանաչված լինելու փաստերը:

Այնուամենայնիվ, հակված ենք այն մտքին, որ Արցախի հիմնահարցը կլուծվի այն դեպքում, եթե հարցի քննարկման նույն սեղանին միաժամանակ դրված լինի հայերի ցեղասպանության ճանաչման հարցը:

Սակայն այսօր հղիանում է շատ լուրջ մտավախություն եւ վտանգ, որ Արցախյան հակամարտությունը կարգավորող երկրները երկար տարիներ, չգտնելով հարցի ճիշտ եւ արդարացի լուծման բանալին (միգուցե պայմանավորված Ադրբեջանի ագրեսիվ պահվածքով կամ մեծ երկրների շահերով), ցավոք, կարող են գնալ նրա լուծման Հայաստանի համար լրիվ անընդունելի տարբերակին, բնականաբար, ի հաշիվ Արցախի ժողովրդի անկախության կամ ազատագրված հայկական բոլոր տարածքների հանձնման, ինչը հայ ժողովուրդը կընկալի որպես մեծ երկրների կողմից բացահայտ սադրանք եւ հրահրում (միտումնավոր, թե ոչ) պատերազմական գործողությունների վերսկսման՝ Ադրբեջանի կողմից, համընդհանուր հրդեհի բռնկման մեր տարածաշրջանում:

Այդ նոր, ավելի մեծ եւ սարսափելի ողբերգական հակամարտությունից խուսափելու նպատակով այսօր՝ թեկուզ եւ բավականին ուշացումով, համայն հայությունը, հանձինս մեր իշխանությունների, ի լուր ողջ աշխարհի քաղաքակիրթ ազգերի եւ նրանց երկրների ղեկավարների, պետք է հանդես գա պատշաճական հայտարարությամբ եւ նրանց դատին ներկայացնի Արցախի հակամարտության կարգավորման շուրջ 20 երկարուձիգ տարիներ դեռեւս շարունակվող, սակայն այդպես էլ լուրջ եւ շոշափելի արդյունքներ չարձանագրած, ներկայիս գուցեեւ ավելի մշուշոտ ու հեռանկար չունեցող բանակցությունների իրական պատկերը, Ադրբեջանի շարունակական մերժողական կեցվածքն ու դիրքորոշումը Մինսկի խմբի կողմից ներկայացված՝ հակամարտության կարգավորման իրատեսական փոխզիջումների բազմաթիվ առաջարկներին, հակառակ որին՝ նրանք վերջին տարիներին կտրուկ եւ մեծ թափով վերազինում են բանակը եւ բացեիբաց, աչխարհով մեկ՝ ի լուր միջազգային բարձր ատյանների հայտարարում իրենց մոտալուտ, նոր ագրեսիայի մասին Արցախի ժողովրդի դեմ:

Նույն ճամկով դիմել հակամարտությունը կարգավորող երկրների նախագահներին՝ պահանջելով, որ հարցի հեռագա քննարկումների ժամանակ անպայման հաշվի առնվեն՝ Արցախյան հակամարտությունն իրականում ծնած հիմնական եւ ծանրակշիռ, պատմական գործոններն ու իրադարձությունները, նրանց բուն պատճառներն ու հետեւանքները, որոնք անմիջական եւ սերտորեն կապված են Թուրքիայում եւ Ադրբեջանում հայ ազգի նկատմամբ իրագործված ցեղասպանությունների հետ:

Ղարաբաղյան հակամարտությունը մերօրյա դիմակայումն է Հայոց ցեղասպանությանը

Նվիրվում է Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակին

հայ ազգաբնակչությունը, որն իր կյանքի մեծ փորձառությամբ, ստեղծագործական ու գիտական սուր մտքով, աշխատասիրությամբ, իր շրջահայաց եւ բազմաշնորհ ձեռներեցությամբ իր ձեռքում էր պահում երկրի տնտեսության կարեւոր նշանակություն ունեցող շատ ճյուղերի մենաշնորհը, ինչը լուրջ խորհելու տեղիք էր տալիս թուրքական իշխանություններին:

Արդելով իր նախնիների երկրում, ունենալով հասարակական բարձր դիրք եւ հեղինակություն, հայերն այնուհանդերձ, իրենց ազգային ինքնության (դավանանքի, լեզվի) պահպանման հանգամանքներով, սփռված էին մշտապես պաշտպանել սեփական ֆիզիկական անվտանգությունը իրենց նկատմամբ շատ հաճախակի կազմակերպվող արյունալի բռնություններից եւ խոշտանգումներից:

Հակահայկական հանցավոր քաղաքականության հետեւանքով հայերի շրջանում օրեցօր աճող ռուսական կողմնորոշումը խիստ անհանգստություն էր պատճառում թուրքական իշխանություններին՝ դիտարկելով նրանց որպես երկրի ազգային անվտանգությանն անմիջականորեն սպառնացող հնարավոր թշնամիների, ինչն էլ ավելի էր սրում երկու ազգերի համատեղ ապրելու եւ գոյատեւելու հանգամանքը:

Թերեւս սրանք էին այն հիմնական եւ գլխավոր դրդապատճառները, որ թուրքական իշխանությունները սկսեցին իրականացնել դեռեւս վաղուց, հետագա տասնամյակների համար ծրագրված՝ հայերի տեղահանմանը, մեկուսացմանը եւ, այնուհետեւ նրանց ֆիզիկապես բնաջնջմանը նպատակաուղղված հետեւողական գործընթացները:

1894-ից լայն թափ ստացավ եւ շարունակվեցին հայերի զանգվածային տեղահանումներն ու կոտորածները, որոնց թիվը 1896-ին արդեն անցնում էր 300.000-ը: Իսկ 1915-ին թուրքական իշխանությունների համար ստեղծվեց առավել հարմար պահ, առիթ ու պատրվակ, նաեւ «լավ» պայմաններ (առաջին աշխարհամարտը)՝ իրագործելու ավելի մեծ մասշտաբի, երկրով մեկ, հայերի համատարած ջարդեր, որոնք շարունակվեցին մինչեւ 1923-ը՝ բերելով հայերի մեկ եւ կես միլիոնից ավելի զոհերի:

1920-ին ստորագրվեց Սեւրի հաշտության պայմանագիրը, ըստ որի՝ միավորված անկախ հայկական պետությունը ստանալու էր ավելի քան 161.000 քառ. կմ տարածք, ունենալով ելք դեպի Սեւ ծով: Սակայն ռուսական հեղափոխության ծնունդ խորհրդային պետությունը Թուրքիայի հետ մեկտեղ՝ իրենց սեռեւս կանխավ ծրագրված էր հետագայում շարունակել հայերի կոտորածները եւ «սպիտակ ջարդը»:

Լինելով «մեկ ազգ, երկու պետություն»՝ թուրքերը դարերով երազել են՝ միավորվել մեկ պետության մեջ եւ այն էլ ի հաշիվ Հայաստանի տարածքի, որը թերեւս Հայոց ցեղասպանության հեռանկարային ծրագրի գլխավոր «դրույթներից» էր: Սակայն նրանց բաղձալի միավորումը, հետագայում՝ «Մեծ Թուրանի» իրագործումը կանգնեցրեց Զանգեզուրի պարանոցը, որն այդպես էլ մնաց թուրքերի կոկորդում...

Այսպիսով, Թուրքիան, իր ողջ տարածքում հայերի զանգվածային բնաջնջումն ու տեղահանումն «լիարժեք» եւ «անմնացորդ» իրագործելուց, 2 միլիոնից ավելի (բնաջնջված ու տեղահանված) հայերի ողջ ունեցվածքը (անշարժ գույքը) բռնազավթելուց, նրանց հսկայական հարստությունը լրիվ կողոպտելուց ու թալանելուց, հայկական առաջին անկախ հանրապետության տարածքի զգալի մասի (Կարսի եւ Արդահանի նահանգների) անեսխայից, Արցախն ու Նախիջեւանը Հայաստանից՝ Ադրբեջանի օգտին զավթելուց հետո, շատ սահուն, նույն՝ հայերի բնաջնջման ծրագրով, նույն հայատյաց կարգախոսներով «փոխադրվեց» թուրքական մյուս պետություն՝ Խորհրդային Ադրբեջանի տարածք՝ շարունակելով այնտեղ նույն թուրքերի ձեռքերով՝ հայ ազգաբնակչության համատարած խոշտանգումներն ու տեղահանումները:

Դրա ապացույցն է, որ այսօր Նախիջեւանում չի մնացել ոչ մի հայ ընտանիք, երբ մինչ նրա «նվիրումը» Ադրբեջանին այնտեղ բնիկ հայերը ջախջախիչ մեծամասնություն էին կազմում: Ողջ աշխարհի աչքի առաջ (2005թ.), ի ցույց եւ ի հեճուկս ամբողջ քաղաքակիրթ ազգերի, բարբարոսաբար ոչնչացվեց համաշխարհային նշանակության պատմամշակութային արժեք ներկայացնող Ջուղայի հայ ճարտարապետության հինավուրց գանձերի շտեմարան-թանգարանը՝ հազարավոր, անկրկնելի, հայկական խաչքարերի մի ամբողջ համաստեղություն:

Հուշախություն մեզ, ԽՍՀՄ փլուզումից դեռեւս երկու տարի առաջ Արցախը, հենց նույն Միության գործող սահմանադրության համապատասխան, ազգերի ինքնորոշման դրույթով, օրինական ճանապարհով հռչակեց իր անկախությունը: Սակայն Ադրբեջանը չհաշտվելով նախկինում՝ իր սացած «ընծայի» կորստի հետ, 1988-ին (ԽՍՀՄ ղեկավարության լուռ համաձայնությամբ) հայերին պատժելու նպատակով նախ Սումգայիթում, ապա Բաքվում պետական մակարդակով սկսեց հայերի հերթական ջարդը: Դա թերեւս 1915-23 թթ.՝ Թուրքիայում եւ 1918-20 թթ.՝ Ադրբեջանում հայերի «կիսաս» մնացած ցեղասպանությունը լրացնելու եւ շարունակելու մեծ տենչանքն էր: Եվ իրոք, միայն թուրքերը կարող էին՝ իրենց հատուկ, կատարելագործված մարդասպանի «վարպետությամբ» իրագործել այն, ինչ կատարվեց Սումգայիթում եւ Բաքվում...

Չբավարարվելով այդ հրեավոր, դաժան կոտորածներով, Ադրբեջանի ղեկավարությունը 1991-ին լայնամասշտաբ պատերազմական գործողություններ ծավալեց Արցախի անզեն ժողովրդի դեմ:

Չնայած մարդկային մեծ զոհերին՝ Արցախի ժողովուրդը կարողացավ ծնկի բերել Ադրբեջանին եւ ազատագրել Արցախի մեծ մասը: Միայն Ռուսաստանի «դիվանագիտական միջամտությամբ» կանգնեցվեց հայ ֆիդայիների հաղթարշավը, ինչը փրկեց Ադրբեջանին էլ ավելի մեծ եւ խայտառակ պարտությունից: Ցավոք, Արցախի պատմական որոշ տարածքներ այսօր դեռեւս գտնվում են գերության մեջ:

Այսպիսով, Արցախյան հակամարտությունը ազերիների կողմից հայերի նկատմամբ տասնամյակներ շարունակ իրագործած «սպիտակ ջարդի», ազգամիջյան բախումների, բռնությունների եւ խոշտանգումների հետեւանք էր, որը հետագայում վերածեց հայերի բացահայտ համատարած ցեղասպանությանը, որին մասնակցում էր ադրբեջանական բանակը:

Իրեն պարտադրված պատերազմին հայ ժողովուրդը արժանավայել հաղթանակով (1994 թ.) դիմակայեց, ընդմիշտ եւ վստահաբար վերջ դնելով հայերի հետագա, հնարավոր ցեղասպանությանը թուրք-ադրբեջանական իշխանությունների կողմից, որի հիմնական, «պատվիրատուն» ու հովանավորը, հետեւաբար դրա հետեւանքների գլխավոր պատասխանատուն, մեծ առումով եղել եւ այսօր էլ մնում է նույն ինքը Թուրքիան:

Այսինքն՝ Արցախի հակամարտությունն ինքնըստինքյան եւ սերտորեն կապված է Հայոց ցեղասպանության հետ, նրա շարունակությունն է իր ողջ էությամբ եւ իրողությամբ, նրա բաղկացուցիչ մասն է կազմում (վերջին, «եզրափակիչ» փուլը) եւ բնականաբար պետք է լուծվի միմիայն Հայոց ցեղասպանության միջազգային դատապարտման եւ նրա ճանաչման հարցի քննարկումների շրջանակներում:

Պատահական չէ, որ մոտ երեք տարի առաջ սկսված, մինչ օրս ընթացք չստացած հայտնի բանակցությունների առիթն ու պատճառը Թուրքիան անմիջապես եւ մեծ հմտությամբ կարողացավ օգտագործել՝ անմիջական եւ ոչ երկրորդական դերակատարություն ստանձնելու Արցախի հակամարտության կարգավորման գործում, մեզ քաջ հայտնի նախապայմանով՝ «սահմանների բացում՝ Արցախի հետ հանձնման փոխարեն», ակնկալելով կրկին ձեռք բերել 1920-ականներին երբեմնի ունեցած մեծ եւ հզոր լծակները՝ Հայաստանին իր քաղաքական ազդեցության եւ կախվածության դաշտ բերելու, թելադրելու իր եւ Ադրբեջանի համար շահավետ որոշումներ վիճահարույց խնդիրներում, անմիջական մասնակցություն ունենալ Արցախյան հակամարտության միջազգային քննարկումներին, օգտագործելով այն՝ ճնշելու, շեղելու կամ հնարավորինս մեկուսացնելու ցեղասպանության ճանաչման հարցը միջազգային հանրության ուշադրությունից, դրանով իսկ ընդհանրապես խուսափելու ցեղասպանության ծանր պատասխանատվությունից:

Ցավալի է եւ անարդար, որ այսօր՝ ինչպես Արցախի ինքնորոշման միջազգային ճանաչման, այնպես էլ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցերի լուծումը մեծ առումով պայմանավորված է մեծ տերությունների եւ նրանց միջեւ գոյություն ունեցող միջազգային հարաբերությունների առկա իրավիճակից եւ հեռագա հնարավոր դրսեւորումներից, ինչպես նաեւ՝ մեր տարածաշրջանում նրանց՝ ներկայիս եւ հեռանկարում ունենալիք շահերից՝ որոնք դրդում եւ հարկադրում են նրանց տուրք տալ ադրբեջանական իշխանությունների պահանջներին՝ հայ ժողովրդի արյան գնով ազատագրած սեփական պատմական տարածքները երկրորդ անգամ, հենց այնպես՝ «սկուտեղի» վրա նվիրել հայերի ցեղասպանությունն իրագործած մի ազգի, որն այսօր էլ սպառնում է նրան՝ պատերազմական նոր ագրեսիայով:

Այսօր ազգամիջյան խնդիրներ ունեցող ժողովուրդները հասկացել են, որ միջազգային բարձր ատյաններում նույն հարցի լուծման համար գոյություն ունեն երկակի ստանդարտներ:

Մեզ համար դրա ցայտուն օրինակներից են մոտ մեկ դար առաջ իր սեփական օրրանում իրագործված Հայոց ցեղասպանության այսօր դեռեւս ճանաչված չլինելու եւ այդ նույն ցեղասպանությունից 25-30 տարի ուշ, այն էլ օտար երկրի տարածքում իրագործված հրեաների ցեղասպանության վաղուց արդեն ճանաչված լինելու փաստերը:

Այնուամենայնիվ, հակված ենք այն մտքին, որ Արցախի հիմնահարցը կլուծվի այն դեպքում, եթե հարցի քննարկման նույն սեղանին միաժամանակ դրված լինի հայերի ցեղասպանության ճանաչման հարցը:

Սակայն այսօր հղիանում է շատ լուրջ մտավախություն եւ վտանգ, որ Արցախյան հակամարտությունը կարգավորող երկրները երկար տարիներ, չգտնելով հարցի ճիշտ եւ արդարացի լուծման բանալին (միգուցե պայմանավորված Ադրբեջանի ագրեսիվ պահվածքով կամ մեծ երկրների շահերով), ցավոք, կարող են գնալ նրա լուծման Հայաստանի համար լրիվ անընդունելի տարբերակին, բնականաբար, ի հաշիվ Արցախի ժողովրդի անկախության կամ ազատագրված հայկական բոլոր տարածքների հանձնման, ինչը հայ ժողովուրդը կընկալի որպես մեծ երկրների կողմից բացահայտ սադրանք եւ հրահրում (միտումնավոր, թե ոչ) պատերազմական գործողությունների վերսկսման՝ Ադրբեջանի կողմից, համընդհանուր հրդեհի բռնկման մեր տարածաշրջանում:

Այդ նոր, ավելի մեծ եւ սարսափելի ողբերգական հակամարտությունից խուսափելու նպատակով այսօր՝ թեկուզ եւ բավականին ուշացումով, համայն հայությունը, հանձինս մեր իշխանությունների, ի լուր ողջ աշխարհի քաղաքակիրթ ազգերի եւ նրանց երկրների ղեկավարների, պետք է հանդես գա պատշաճական հայտարարությամբ եւ նրանց դատին ներկայացնի Արցախի հակամարտության կարգավորման շուրջ 20 երկարուձիգ տարիներ դեռեւս շարունակվող, սակայն այդպես էլ լուրջ եւ շոշափելի արդյունքներ չարձանագրած, ներկայիս գուցեեւ ավելի մշուշոտ ու հեռանկար չունեցող բանակցությունների իրական պատկերը, Ադրբեջանի շարունակական մերժողական կեցվածքն ու դիրքորոշումը Մինսկի խմբի կողմից ներկայացված՝ հակամարտության կարգավորման իրատեսական փոխզիջումների բազմաթիվ առաջարկներին, հակառակ որին՝ նրանք վերջին տարիներին կտրուկ եւ մեծ թափով վերազինում են բանակը եւ բացեիբաց, աշխարհով մեկ՝ ի լուր միջազգային բարձր ատյանների հայտարարում իրենց մոտալուտ, նոր ագրեսիայի մասին Արցախի ժողովրդի դեմ:

Նույն ճամկով դիմել հակամարտությունը կարգավորող երկրների նախագահներին՝ պահանջելով, որ հարցի հեռագա քննարկումների ժամանակ անպայման հաշվի առնվեն՝ Արցախյան հակամարտությունն իրականում ծնած հիմնական եւ ծանրակշիռ, պատմական գործոններն ու իրադարձությունները, նրանց բուն պատճառներն ու հետեւանքները, որոնք անմիջական եւ սերտորեն կապված են Թուրքիայում եւ Ադրբեջանում հայ ազգի նկատմամբ իրագործված ցեղասպանությունների հետ:

Ինչեւիցե, այսօր ժամանակն է, որ մենք (ողջ հայությունը), ապավինելով մեր հավաքական ուժին, միաբանվենք, հզորացնենք մեր երկիրը բոլոր առումներով, պաշտպանենք Արցախը Ադրբեջանի «խոստացած» ագրեսիայից, շրջանառության մեջ դնենք Սեւրի անարդար «սառեցված» պայմանագրի վերականգնման, վերահաստատման հարցը՝ միջազգային դիվանագիտական ասպարեզում, դրանով իսկ հրավիրելով միջազգային հանրության եւ բարձր ատյանների ուշադրությունը հարցին: Դրանց համար այսօր մեր առաջնահերթ եւ հրատապ խնդիրն է կտրուկ բարձրացնել մեր երկրի եւ նրա իշխանությունների վարկանիշն ու հեղինակությունը միջազգային ասպարեզում եւ մեր սեփական երկրում:

Ցավոք, այսօրվա մեր իշխանությունները, երկրի ներսում չունենալով բավարար աջակցություն ժողովրդի կողմից, չվայելելով նրա հավատն ու վստահությունը, սպիտված են լինում հաճախակի գնալ մեծ զիջումների միջազգային բանակցություններում, հատկապես Արցախի հարցում, ինչը մեծ վտանգ եւ սպառնալիք է ողջ հայ ժողովրդի համար: Նրանք հիմնականում խուսափում են համարձակ, հաստատակամ, գուցեեւ կոշտ, սակայն հավատի եւ արդարացված պահանջներ ներկայացնել միջազգային ատյաններին, օրինակ՝ հանդես գալ պահանջատիրական դիրքերից, անել ամեն հնարավորն ու անհնարինը, որպեսզի Արցախյան հակամարտության կարգավորման հարցի քննարկման ժամանակ նույն բանակցային սեղանին դրվի նաեւ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, ընդհուպ Սումգայիթի, Բաքվի կոտորածների հարցը:

Ինչ վերաբերում է մեր երկրի ներսում իշխանությունների վարկանիշի բարձրացմանը, առանց որի անհնար է միջազգային ատյաններում նրա հեղինակության բարձրացումը, ապա բավական է, որ մեր երկրում կազմակերպվեն ազատ, արդար, թափանցիկ, առանց կեղծիքների ընտրություններ, որը, ցավոք, դժվար իրագործելի է ներկայիս իշխանությունների օրոք: Դա թերեւս հնարավոր կլիներ, եթե նրանք անկեղծ, մտահոգված լինեին մեր ժողովրդի եւ երկրի անվտանգությամբ, այսօրվա անկայուն, անմխիթար քաղաքական, տնտեսական եւ սոցիալական իրավիճակներով, նրա մշուշոտ եւ հույս չներշնչող ապագայով, նոր թափ առած արտագաղթով:

ՄԵՐԳԵՅ ՀԱՔԻՆՅԱՆ
ՌՈԲԵՐՏ ՇԱՄԽԻՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԹՈՐՈՍՅԱՆ

Ադրբեջանամե՞ս Արգենտինա՞

Ադրբեջանի լատինամերիկյան պետությունները, նավթը, շինկիթն ու դրանց հնարավոր հետևանքները

Հեռավոր Արգենտինայի՝ Հարավային Կովկասի առնվազն երկու երկրների՝ Հայաստանի ու Ադրբեջանի հետ հարաբերությունները համադրելի իրողություններ չեն, անգամ գոյության ժամանակահատվածի ու դրսևորումների առումով, սակայն հնարավոր է, որ Եվրոպայի խորհրդի, նաեւ դրանից դուրս գործադրվող ադրբեջանական «ձկնկիթային դիվանագիտության» ու նավթային համաձայնությունների պարագայում իրավիճակի փոփոխություն տեղի ունենա:

Սակայն, ինչպես ասում են, ամեն ինչ՝ հերթով:

Հուլիսի 19-ին Արգենտինայում Հայաստանի դեսպան Վահագն Մելիքյանը հանդիպել է Արգենտինայի Հանրապետության արտգործնախարար Էկսոր Տիմերմանին: ԱԳՆ հաղորդագրությամբ, հանդիպմանը քննարկվել են երկկողմ հարաբերություններին, իրավաքաղաքական դաշտին, ինչպես նաեւ երկկողմ բարձրաստիճան այցելությունների իրականացմանն առնչվող մի շարք հարցեր:

Արգենտինայի արտգործնախարարը հետաքրքրվել է այն բնագավառներով, որոնք կարող են փոխշահավետ տնտեսական համագործակցության հիմք հանդիսանալ: Դեսպան Մելիքյանն էլ հանգամանալից ներկայացրել է Հայաստանի տնտեսական իրավիճակը, առկա ներդրումային դաշտը եւ հնարավորությունները: Առանձնացվել են գյուղատնտեսության, առողջապահության, տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության, ատոմային եւ վերականգնվող էներգետիկայի ոլորտները:

Անդրադառնալով ԼՂ հիմնահարցին՝ Տիմերմանը նշել է, որ Արգենտինան աջակցում է Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցային գործընթացին եւ կողմնակից է խնդրի բացառապես խաղաղ ճանապարհով կարգավորմանը: Արգենտինահայ համայնքի առնչությամբ էլ նշել է, որ նա իր կարեւորագույն դերակատարումն ունի երկրի հասարակական, քաղաքական, տնտեսական եւ մշակութային կյանքում:

Արգենտինայի արտգործնախարարը տեղեկացրել է, որ սիրով ընդունում է Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հրավերը՝ առաջիկա ամիսներին այցելելու Հայաստան:

Ու մինչ այդ այցելությունը տեղի կունենա, այս օրերին լատինամերիկյան տուրնե է սկսել Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը՝ այցելելու Կոլումբիա, Արգենտինա, Ուրուգվայ եւ Պերու, որոնցից Արգենտինայում եւ Կոլումբիայում կանցկացվեն երկկողմ բիզնես- համաժողովներ:

Փաստացի՝ Մամեդյարովի այցը, հատկապես Արգենտինա, պատասխան այցելություն է, քանի որ այդ երկրի արտաքին գերատեսչության ղեկավարը Բախվում էր դեռեւս հուլիսի սկզբին՝ ներքին առեւտրի քարտուղարի ու գործարարների պատվիրակության հետ: Այդ այցն, առաջին հերթին, կապվում է վերջերս ազգայնացված YPF նավթային ընկերության նավթահանքերում ադրբեջանական SOCAR-ի հավանական ներդրումների հետ: Ադրբեջանն էլ, արդեն իսկ ունենալով մեխիկական ու կոլումբիական տարբեր հարթակներում ադրբեջանամետ քայլեր անելու փորձը, հատատապես բաց չի թողնի արգենտինական տարածքում էլ նավթ ու ձկնկիթով ադրբեջանամետ դիրքորոշման վկայություններ պոկելու հնարավորությունը:

Հասկանալի է, որ լատինամերիկյան հատվածի ղարաբաղյան խնդրի առնչությամբ չեզոք դիրքորոշումները այսօրինակ գործելակերպի պարագայում կարող են փոփոխություններ կրել, ինչն էլ Բաքու արգենտինական պատվիրակության այցելության շրջանում անհանգստություն էր առաջացրել Արգենտինայի հայ համայնքում, նաեւ արգենտինյան հասարակության զգալի հատվածի մեջ:

Արգենտինական մամուլում կասկածներ են հայտնվել, թե որքանով էր արդյունավետ արգենտինական պատվիրակության այցելությունը Ադրբեջան, հատկապես որ վերադարձին արգենտինացի գործարարներն առանձնակի փայլուն արդյունքի մասին չեն խոսել: Այս ամենն, իհարկե, չի նշանակում, որ այս օրերին ադրբեջանական պատվիրակության Բուենոս Այրես այցելության ու արգենտինա-ադրբեջանական գործարար համաժողովի անցկացմամբ ինչ-որ պայմանավորվածություններ ձեռք չեն բերվի՝ դրանց դիմաց այլ բաների ակնկալիքով:

Արգենտինական մամուլից «Clarin» օրաթերթը, նախ, հիշեցրել է Իսրայել-Ադրբեջան ռազմական 1,5 մլրդ դոլարի գործարքն ու այդ միջոցով ձեռք բերված սպառազինությամբ տարածաշրջանում պատերազմի վերսկսման վտանգն ու ընդգծել, որ Արգենտինայի ներկայիս քայլերն էլ կդառնան խախտանք Ադրբեջանի ռազմական քայլերի համար: «La Nacion» օրաթերթն էլ անդրադարձել է Ադրբեջանում տիրող իրավիճակին ու արգենտինական նավթային հարցերում նոր գործընկեր SOCAR-ին: Ըստ թերթի խմբագրականի, Ադրբեջանում ավտորիտար ռեժիմ է, նախագահ Ալիեւը իշխանությունը ժառանգել է հորից, վարչակազմը կոռումպացված է, ընտրակեղծարար, երկրում էլ հալածական ու բանտարկյալ են անկախ լրագրողները եւ այլն:

Արգենտինայի պատգամավորների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի փոխնախագահ Ռիկարդո Ալֆոնսինն էլ պահանջել է ղարաբաղյան հարցում պահպանել արգենտինական դիրքորոշումը՝ խաղաղ կարգավորմանն այլընտրանք չլինելու առումով: Պատգամավորն անհանգստություն է հայտնել, որ Արգենտինա-Ադրբեջան տնտեսական հարաբերությունների սերտացումը կարող է ազդել հակամարտության առնչությամբ Արգենտինայի դիրքորոշման վրա:

Ա.ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ամերիկյան օդուժ՝ նաեւ Ճապոնիայում

Աֆղանստանից դուրս է բերվել 12 հազար զինծառայող

Հուլիսի 23-ին Ճապոնիա է հասցվել ամերիկյան MV-22 Osprey տիպի 12 կոնվերտոպլան: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ Իվակունիի ռազմակայանում տեխնիկական սուգման ենթարկվելուց եւ հավաքվելուց հետո այդ փոքր ռազմօդանավերը 2012-ի հոկտեմբերին կտեղափոխվեն ԱՄՆ ծովային հետեւակի «Ֆուտենմա» ռազմակայան (Օկինավա կղզի):

Ճապոնացիները ամերիկյան օդուժի տեղաբաշխման հետ կապված երկյուղներ ունեն: 2012-ի հունիսին CV-22 Osprey էր ընկել Ֆլորիդայում: Ավելի վաղ՝ ապրիլին MV-22 Osprey էր ջախջախվել Մարոկկոյում:

Ֆրանսպրեսը նշում է, որ Օկինավայի բնակիչները եւ իշխանությունները չեն կարող խոչընդոտել երկրում Osprey-ների տեղաբաշխմանը: Նման բան ի վիճակի է անել միայն Ճապոնիայի վարչապետ Յոսիհիկո Նոդան:

Ընդհանուր առմամբ Ճապոնիայում տեղաբաշխված է մոտ 50 հազար ամերիկացի զինծառայող, կեսից ավելին՝ Օկինավայում: Ավելի վաղ ԱՄՆ-ը եւ Ճապոնիան պայմանավորվել էին Օկինավայից 9 հազար զինծառայողի դուրսբերման շուրջը: Ճապոնացիները թերահավատորեն էին ընդունել այդ լուրը, քանի որ դուրսբերման ժամկետներ չեն նշված: Ավելի քան 10 տարի առաջ կողմերը պայմանավորվել էին նույնիսկ Օկինավայի ռազմակայանի փակման շուրջը, բայց այդ մասին առհասարակ չի հիշվում:

Ինչ վերաբերում է Աֆղանստանում տեղաբաշխված ամերիկյան զորքին, այս տարի նախատեսված է դուրս բերել 23 հազար զինծառայող, որից 12 հազարն արդեն դուրս է բերվել: Այդ մասին Ասոշիեյթեդ պրես գործակալությանը հայտնել է Աֆղանստանում ՆԱՏՕ-ի զորքերի հրամանատար, գեներալ Ջոն Ալենը:

Աֆղանստանում կմնա 68 հազար ամերիկացի զինծառայող, ինչպես նաեւ դաշնակից երկրների 40 հազար զինվոր ու սպա:

ԴԱՄԱՍԿՈՍ

Սիրիական բանակը հակահարձակման է անցնում

Լիգան Ասադին հորդորում է հեռանալ

Սիրիական բանակը երեկ ապստամբների դիրքերի վրա հակագրոհներ է սկսել մայրաքաղաք Դամասկոսում, Հալեպում եւ այլուր: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ գործողություններ են ծավալվում մասնավորապես Դամասկոսի շրջակայքում: Երեկ առավոտյան մայրաքաղաքի արեւմուտքում՝ Մեզզե հարուստ թաղամասում շարունակվում էին գիշերը սկսած մարտերը:

SANA գործակալությունը հաղորդում է, որ երկրի զինված ուժերը «արդյունավետ գործողություն» են իրականացրել Ռազիի մզգասաններում, «շրջապատել եւ սպանել են բազմաթիվ ահաբեկիչների»: Թաքնված մի շարք «ահաբեկիչներ» ձերբակալվել են կոյուղու ցանցում:

Բանակն առգրավել է հրթիռների արձակման մեխանիկական սարքեր, հրացաններ եւ գնդացիրներ, կապի միջոցներ եւ գողացված դեղորայք:

Զինվորական աղբյուրները եւ Ֆրանսպրեսի լրագրողներից մեկը հավելում են, որ բանակը երեկ նոր զորախմբեր է մտցրել Դամասկոսի այն թաղամասեր, որոնք գիշերային ռմբակոծության էին ենթարկվել:

Ընդդիմության աղբյուրներ վկայակոչելով՝ «Լիբերասիոն» թերթի կայքէջը հաղորդում է, որ երեկ կառավարական զորքի հավելյալ ուժեր են բերվել մայրաքաղաքի Նահր Այշա թաղամաս եւ շարժվում են դեպի Ալ Ջահիրա:

Երկրի տնտեսական կենտրոն Հալեպում եւս կատաղի մարտեր են մղվում: Այնտեղ ապստամբները կիրակի օրը ընդհանուր զորահավաք են հայտարարել: Երեկ մարտեր էին ծավալվել քաղաքի արեւելքում՝ Սահուր եւ Հանանո Սիթի թաղամասերում, որոնք հեռու են քաղաքի հայաբաս կենտրոններից:

Ապստամբների խորհրդանշական կենտրոն Հոմսը, ինչպես նաեւ Ռաստանը ռմբակոծվել են մասնավորապես ուղղաթիռներից:

Մինչ երկրում մարտեր են մղվում, Արաբական լիգայի երկրների արտգործնախարարները Քաթարի մայրաքաղաք Դոհայում նիստ անելով՝ Սիրիայի նախագահ Բաշար Ասադին կոչ են արել հնարավորինս շուտ «հրաժարվել իշխանությունից»:

Լիգայի երկրները փոխարենը Ասադին եւ նրա ընտանիքին խոստանում են «ապահով ելք» Սիրիայից:

Երեկ վաղ առավոտյան արտգործնախարարների տարածած հայտարարության մեջ նշվում է, որ Ասադի պաշտոնաթողությունը կոչված է «վերջ դնելու արյունահեղությանը, պահպանելու Սիրիայի միասնականությունը եւ երաշխավորելու խաղաղ իշխանափոխություն»:

Հանդիպման ժամանակ նաեւ որոշվել է ընդդիմությանը եւ «Սիրիական ազատ բանակին» կոչ անել կազմավորելու ազգային միասնության անցումային կառավարություն: Սիրիացի փախստականներին օգնելու նպատակով կհատկացվի 100 մլն դոլար:

Չավեսը վենեսուելացիներին կոչ արեց հրաժարվել Coca-Cola-ից

Վենեսուելայի նախագահ Ուգո Չավեսը երկրի քաղաքացիներին հորդորել է խմել հայրենական մրգահյութեր, այլ ոչ թե ներմուծվող Coca-Cola եւ Pepsi-Cola ըմպելիքներ: Այդպիսով նախագահն ուզում է ավելացնել վենեսուելական արտադրանքի սպառումը:

Իր հեռուստաելույթներում նա բնակչությանը հաճախ կոչ է անում օգտագործել առողջ սնունդ, խուսափել թմրանյութերից եւ ալկոհոլից: Միեւնույն ժամանակ նա գովազդում է հայրենական գինիները:

Վենեսուելայի ՀՆԱ-ում գյուղատնտեսության բաժինը մոտ 4 տոկոս է, նշում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը: Սպառվող սնունդի եւ ըմպելիքների մեծ մասը ներմուծվում է: Արդեն 13 տարի երկիրը կառավարող Չավեսը վարում է «21-րդ դարի սոցիալիզմի» քաղաքականություն: Դրա հիմնական նպատակը պետական վերահսկողության ուժեղացումն է տնտեսության շահութաբեր ճյուղերում, առաջին հերթին՝ նավթարդյունաբերության մեջ:

Գալյա Նովենցը դերասանուհի էր, բայց երբեք դերասանություն չարեց

Գալյա Նովենց... Հայ բեմական արվեստի դասականներից էր ՀՀ ժողովրդական արտիստ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր, «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» բարձրագույն շքանշանակիր դերասանուհին:

Տավոր, անժամանակ մահը՝ հարազատ թատերաբեմերից ու երկրպագուներից խլեց ու տարավ Գալյա Նովենցին, որի ողջ կյանքը լեցուն էր բեմական գործունեությամբ: Բեմերում եւ ֆիլմերում Գալյա Նովենցը մեզ հմայում է իր բնական կեցվածքով:

Գալյա Նովենցը դերասանական հմտությունները ձեռք բերեց Արմեն Գուլակյանի կուրսում եւ իր դերասանական ուղին սկսեց 1958-ին՝ Կարմանի պետական դրամատիկական թատրոնից, այնուհետեւ Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական, Գյումրու Վ. Աշեմյանի անվան, Երեւանի Հր. Ղափլանյանի անվան, ապա Սոս Սարգսյանի հիմնած ու գլխավորած «Համազգային» թատրոններում: Վերջին տարիներին Գ. Նովենցը Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի դերասանուհի էր, որտեղ էլ կերտեց իր վերջին դերերը... Գալյա Նովենցին համարում էին հայ բեմարվեստի Աննա Մանյանի, որն **«Ազգի»** հետ վերջին հարցազրույցում ասաց. «Ես ինձ դերասան չեմ համարում: Միշտ էլ ասել եմ, որ դերասանություն անել չեմ կարող...»: Գ. Նովենցի պարագայում այս էր: Այս դեպքում մենք դիտել ենք զգացմունքները ոչ թե ցուցադրող, այլ ներս գցող, թափանցող, կերպարի հուզմունքները իրենը դարձնող, նրա հետ տառապող դերասանուհու խաղը՝ եթե միայն կարելի է դա խաղ համարել: Նրա ավանդը հատկապես ակնառու է կինոյում. Նովենցը խաղացել է երեք տասնյակ ֆիլմերում, որոնցից են՝ «Բարեւ, ես եմ», «Մենք ենք, մեր սարերը», «Այս խաչմերուկում», «Հին օրերի երգը», «Նահապետ», «Գիքորը», «Մեր մանկության տանգոն», «Սպիտակ անուրջներ», «Կտոր մը երկինք» եւ այլն, որտեղ նա մոռանում էր դերասանի կատարին եւ խորամուխ լինում կերպարի էության մեջ: Ահա հենց սա է դերասանական արվեստի բարձունքը, որին դժվարությամբ, բայց հաստատակամ քայլերով հասավ Գալյան, մեր բոլորի կողմից շատ սիրելի Գալյան: Նա դերասանուհի էր, բայց երբեք դերասանություն չարեց... «Կինոյում ես մարդ եմ զգում ինձ», ասում էր Գալյա Նովենցը եւ շարունակում. «դառնում եմ ինքնավստահ... ինքս ինձ հետ, իմ մտորումների ու հույզերի ծովում...»:

Իսկ այն հարցին, թե կինոն շատ հրապուրեց իրեն, թե՞ թատրոնը, ասաց. «Երկու դեպքում էլ ես ինձ զգացել եմ արվեստի մարդ, թատրոնի մարդ ու տվեցի այն ամենը, ինչը կուտակվել էր իմ մեջ իմ ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում: Եվ փոխարենը արժանացել եմ ջերմ խոսքերի, անսահման ծափերի...»:

Նա կենցաղային էկզոտիկ դերերի անսպառ պոտենցիալ ուներ: Յուրահանչյուր դերում՝ լիներ դա գլխավոր թե էպիզոդիկ, դերասանուհին կատարյալ վարպետությամբ միաձուլում էր կենցաղայինն ու ազգայինը, անհատականն ու ընդհանրականը, ջերմությունն ու սառնությունը: Կերպարների մարմնավորման ինքնատիպությունը, լայն դիապազոնը Գալյայի համար ապահովեց յուրահատուկ տեղ հայ թատրոնում եւ կինոարվեստում:

Բոլորովին վերջերս **«Ազգը»** Գալյա Նովենցի հետ զրուցեց ու այդ զրույցից ստացած տպավորությունները, ցավոք, արդեն առանց Նովենցի ֆիզիկական ներկայության, ներկայացնում ենք ստորեւ: Գալյա Նովենցը զգայուն եւ քնքշասիրտ մայր էր եւ այդ մայրական անզուսպ բերկրանքով նա լցրեց թատրոնն ու կինոդահլիճները: Նովենց դերասանուհու հմայքը մեր բեմարվեստի հարստությունն էր: Առաջին անգամ 1985-ին Վենետիկի եւ Մինսկի կինոփառատոներում «Մեր մանկության տանգոն» (ռեժ.՝ Ա. Մկրտչյան) ֆիլմում լավագույն դերակատարման համար արժանացել է ժյուրիի բարձր գնահատականին եւ մրցանակին: «Այն բոլոր դերերը, որ ես կերտել եմ կինոյում, թատրոնում, ասում էր Գալյա Նովենցը, դրանք կարծես իմ ապրած կյանքը լինեն: Ես զգացականով եմ ներկայացրել դրանք, ոչ թե խաղացել եմ: Իսկ դա շատ բարդ ու դժվարին է եղել՝ մտնել մի կերպարի մեջ ու ներկայացնել այնպես, ինչպես զգում ես, առանց ավելորդության: Դա է եղել գուցե իմ հաջողությունների գրավականը: Ահա այս է իմ պատասխանը ձեր հարցին...»:

Գալյա Նովենցի մահվան առթիվ ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է թաղման կառավարական հանձնաժողով ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի նախագահությամբ:

Սիրված դերասանուհու հոգեհանգիստը կկայանա Կոնդ թաղամասի Սուրբ Հովհաննես եկեղեցում հուլիսի 24-ին ժամը 18:00-20:00-ն: Վերջին հրաժեշտը՝ հուլիսի 25-ին, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում (ժ. 12:00-14:00):

***

ՀՀ ժողովրդական արտիստուհի Գալյա Նովենցի անժամանակ մահվան առիթով ցավակցագիր է հղել Գարեգին Բ ամենայն հայոց կաթողիկոսը, վարչապետը, ՀՀ մշակույթի նախարարությունը, Հայաստանի թատերական գործիչների եւ կինոմատոգրաֆիստների միությունները եւ ուրիշներ:

ՄԱԲԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

***

Հայտնի են «Սարոյան մրցանակի» ժյուրիի անդամները

Լոս Անջելեսից «Հայկական դրամատիկական արվեստի դաշնությունն» (ՀԴԱԴ) ու «Վիլյամ Սարոյան հիմնադրամը» տեղեկացնում են, որ արդեն ընտրել են պիեսներ գրելու երրորդ տարեկան մրցանաբախության ժյուրիի անդամներին: Դրանք են պրոդյուսեր եւ դերասանուհի Գեյթս Մկֆադդենը, թատերագիր Քեթրին Ֆիլուն եւ թատերագիր-սցենարիստ Էդուարդո Մաչադոն:

Ըստ «Արմինյն միրոր-սփեթթեյթր» շաբաթաթերթի, խորեոգրաֆ եւ դերասանուհի Մկֆադդենը Լոս Անջելեսում գործող Ensemble Studio Theater-ի գեղարվեստական ղեկավարն է: Նախկինում դասավանդել է Պիտսբուրգի եւ Նյու Յորքի ու Հարվարդի համալսարաններում: Դերերով հանդես է եկել «Star Trek», «The Hunt for Red October», «Muppets Take Manhattan» եւ այլ ֆիլմերում:

Ֆիլուն մրցանակակիր թատերագիր է: Հայտնի է մարդու իրավունքների եւ սոցիալական արդարության մասին գրած իր պիեսներով, որոնք ներկայացվել են ինչպես Նյու Յորքում, այնպես էլ աշխարհի տարբեր բեմերում:

Նրա նորագույն «LUZ» պիեսը առաջիկա սեպտեմբեր-հոկտեմբերի ամիսներին բեմադրվելու է Նյու Յորքի «La MaMa» թատրոնում: Արժանացել է բազմաթիվ մրցանակների եւ հիմնադիրներից է «Թատրոն առանց սահմանների» կազմակերպության:

Ծնունդով կուբացի Մաչադոն ինը տարեկանում է Մ. Նահանգներ գաղթել եւ հասակ է առել Լոս Անջելեսում: Հեղինակ է ավելի քան 40 պիեսների, որոնց թվում կարելի է նշել «The Floating Island Plays» («Ծփացող կղզու պիեսները»), «A Burning Beach» («Այրվող լողափը»), «Havana is Waiting» («Հավանան սպասում է») եւ «The Cook» («Խոհարարը»): Դրանք ներկայացվել են ինչպես Ամերիկայում, այնպես էլ Եվրոպայում: Ներկայումս նա Նյու Յորքի «INTAR» թատրոնի գեղարվեստական ղեկավարն է:

Հարգարժան ժյուրին ընտրելու է եզրափակիչ փուլ հասած երեք պիեսներին, որոնք հրապարակվելու են առաջիկա ամսվա ընթացքում: 10 հազար դոլարի գլխավոր մրցանակակիրը հայտնի է դառնալու ավելի ուշ:

Առավել մանրամասնությունների համար խորհուրդ է տրվում այցելել «www.armeniandrama.org» կայքը:

Հ. Ծ.

«Ոսկե հուշամեդալ» Ռաիսա Մկրտչյանին

ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը նախարարության բարձրագույն պարգեւով՝ «Ոսկե հուշամեդալով» պարգեւատրել է Երեւանի Ա. Բաբաջանյանի անվան երաժշտամանկավարժական քոլեջի դասախոս, ՀՀ ժողովրդական արտիստուհի, ՀՀ հեռուստատեսության եւ ռադիոյի էստրադային նվագախմբի մենակատար Ռաիսա Մկրտչյանին: Վերջինս այդ պարգեւին արժանացել է կրթության ոլորտում ունեցած երկարամյա մանկավարժական գործունեության եւ ծննդյան 70-ամյա հոբելյանի կապակցությամբ:

Մ. Մ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐԻԿ ԵՐԳԻՉՆԵՐԸ» ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ

Ճապոնական անհատակ գանձեր

Մեր հաջորդ կանգառը Կյուսյու կղզում էր, որտեղ վերջերս տեղի ունեցավ տարեային աղետ, մեծ ջրհեղեղ, որի հետեւանքով հազարավոր ճապոնացիներ տարհանվեցին, շատերն էլ զրկվեցին իրենց տներից: Մինչ այդտեղ մեկնելը, հանդիպում ունեցանք մեզ հրավիրող «Մին-Օն» կազմակերպության ղեկավարության եւ աշխատակիցների հետ, ինչպես նաեւ կազմակերպության կենտրոնականի հետ: Չնայած մեր բոլոր փորձերը նույն շենքում էինք անցկացրել՝ փորձադահլիճից բացի ոչինչ չէինք հասցրել տեսնել եւ չէինք էլ պատկերացնում այդ մեծ կառույցի իրական չափերը:

«Մին-Օն»-ը 1963 թվականին Սոկա Գակկայի միջազգային կազմակերպության նախագահ Դաիսակու Իկեդայի կողմից հիմնադրված, արվեստագետների եւ երաժիշտների համերգային շրջագայություններ նախագծող խոշարագույն ճապոնական կազմակերպությունն է: Հիմնադրման առաջին իսկ օրերից կազմակերպությունը հավատարիմ է երաժշտության միջոցով տարբեր ազգային պատկանելություն ունեցող մարդկանց միավորման եւ ողջ աշխարհում խաղաղության սերմանման առաջնորդ հանդիսանալու իր առաքելությանը: «Մին-Օն» կազմակերպությունը տարեկան շուրջ հազար համերգ է կազմակերպում, որոնցից մեկ-երրորդն արտասահմանից հրավիրված խմբեր եւ մենակատարներ են: Ընտրությունը կատարվում է հատակ սկզբունքով. բացի համապատասխան համբավից եւ ճանաչումից, հրավիրվող խումբը պետք է կարգով ավելի բարձր լինի, քան նմանատիպ ճապոնական խմբերը:

Հանդիպման ընթացքում շրջեցինք «Մին-Օն»-ի թանգարանում: Այն յուրաքանչյուր երաժշտին պարզապես հեքիաթ կթվար. շուրջ 45.000 պարտիտուր, որոնք հասանելի են յուրաքանչյուրին, ազգային եւ դասական գործիքների եզակի նմուշներ: Մեր այցելության ընթացքում ունկնդրեցինք աշխարհում եզակի գործող դաշնամուրների հնչողությունը. աշխարհում միակ չեմբլոն, 1795 թվականին Վիեննայում պատրաստված «Անտոն Վոլտեր» ֆորտեպիանոն, որի վրա կյանքի վերջին տարիներին ստեղծագործում էր Մոցարտը, Սեյժի Օզավուայի՝ իր ուսուցչի նվիրած դաշնամուրը, որը նա ամեն անգամ Ճապոնիա այցելելիս նվագում է եւ վերհիշում իր ուսուցչին: Չնայած էթնիկ գործիքների բազմազանությանն, իրոք, ցավալի էր, որ հայկական անգամ մեկ գործիք ներկայացված չէր. ավելին՝ սազը, համանչան ու թառը միայն այլ երկրների ազգային գործիքների շարքում էին: Մենք հատատակամորեն որոշեցինք Հայաստան վերադառնալուց անմիջապես հետո լրացնել այդ բացը:

Կիտակյուսյու քաղաք հասանք արագընթաց գնացքով՝ ճանապարհին հիանալով ճապոնական փոքր բնակավայրերով. երկհարկանի տնակներ՝ շրջապատված անտառապատ սարերով, որոնք Լոռվա բնությունն էին հիշեցնում: Զգացինք, որ, իսկապես կարոտել ենք Հայաստանը:

Երեկոյան համերգը կայացավ հազար չորս հարյուր տեղանոց «Սոլեյլ» համերգադահլիճում. կրկին ոգեւորված ունկնդիր, ծանոթ ստեղծագործությունները մեզ հետ հավասար կատարող մարդիկ: Հատուկ այս շրջագայության համար մենք կարճ ժամանակահատվածում ձայնասկավառակ էինք պատրաստել որպես հայ ժողովրդի հարգանքի եւ աջակցության հավաստիք ճապոնացի ժողովրդին. համերգի ավարտին ոչ մի սկավառակ չէր մնացել:

Եվ վերջապես այսօր երկու արագընթաց գնացք փոխելուց հետո մեր «խիստ ճապոնական» օրակարգը բերեց մեզ հովհարների քաղաք Մարուգամե: Ճանապարհին ճեռքընթացն անցավ Հոնսյու եւ Սիկոկու կղզիները միացնող աշխարհում ամենաերկար 13,1 կմ երկմակարդակ՝ գնացքների եւ ավտոմեքենաների համար նախատեսված Մեծ Սետո կամուրջով: Տեղ հասնելուց մեկ ժամ հետո արդեն բեմում էինք: Այսօրվա ունկնդիրն իսկապես առանձնանում էր ճապոնացիներին ոչ հատուկ ներգործուն մասնակցությամբ: Դահլիճը ձայնակցում էր ինչպես ճապոնական ազգային ստեղծագործությունների, հատկապես՝ Բանդայ լեռան մասին երգին, այնպես էլ «Աղջիկն Իպանեմայից» եւ «Էդելվայս» ստեղծագործություններին: Առանձնապես ոգեւորվեցինք կիմանոներով տատիկներին հայկական ստեղծագործությունների ընթացքում շարունակաբար ծափահարելուց տեսնելիս:

Գնալով ավելի խորն ենք ընկալում այս երկրի մշակույթն ու պարելաոճը, մարդկանց ներաշխարհն, ու այս ամենն, անկասկած, իր հետքն է թողնում յուրաքնչյուրիս հոգեմտավոր կերտվածքի վրա:

ՆԵՐՍԵՍՅԱՆ ՎԱՐՍԵՆԻԿ
ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

Հորդանանի «Սպիտակ» պարային համույթի համերգը Երեւանում

«Իմ Հայաստան» համահայկական փառատոնի Պարարվեստի օրերի շրջանակներում Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի դահլիճում կայացավ Հորդանանի «Սպիտակ» պարային համույթի համերգը (գեղարվեստական ղեկավար՝ Մարալ Դեմիրճյան):

Պարային խումբը հիմնադրվել է 1960 թ.: 1988թ. Սպիտակի երկրաշարժից հետո խումբը ստացավ «Սպիտակ» անվանումը: Մեկ տարի անց խումբը իր 20 պարողներով համերգներով հանդես է եկել Հորդանանի թագավորական մշակութային կենտրոնում:

Պարախումբը 2009-ին եւ 2011-ին եղել է Հայաստանում, մասնակցել մի շարք փառատոնների, հաղորդակցվել հայկական պարարվեստի ակունքներին ու ներկայացրել հայկական մշակույթը, ազգագրական, ժողովրդական պարը Հորդանանի հայ համայնքում:

Մ. Մ.

Հայ պատանի ըմբիշների հարուստ ավարը

10 մեդալ Եվրոպայի առաջնությունում

Լեհաստանի Կատովիցե քաղաքում իրենց մրցավեճն ավարտեցին ըմբիշները, որոնք վիճարկում էին Եվրոպայի պատանիների չեմպիոնի տիտղոսը: Վերջինը մրցաստարեզ դուրս եկան հունահռոմեական ոճի ըմբիշները:

Գերազանց ելույթ ունեցան մեր պատանի ըմբիշները: Մրցագորգ դուրս եկած մեր 8 ըմբիշներից 6-ը դարձան մրցանակակիրներ: Առավել հաջող հանդես եկան Վահե Սարգսյանը (42 կգ) եւ Կարեն Ասլանյանը (58 կգ), որոնք նվաճեցին Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը:

Վահեն հաղթեց իր բոլոր մրցակիցներին՝ բելառուս Յուրի Սավաստիանովին, վրացի Թիմուր Շավաձեին, լիտվացի Քրիստուպաս Սլեյվային եւ ուկրաինացի Արթուր Պոլիտաեւին: Կարենը հաջորդաբար պարտության մատնեց լատվիացի Ալեքսանդր Յուրկյանսին, շվեդ Անդրե Իսբերգին, ռումինացի Միհութ Միհային, լիտվացի Յուստաս Պետրավիչյուսին ու մտավ եզրափակիչ: Վճռորոշ գոտեմարտում հայ ըմբիշի մրցակիցն ադրբեջանցի Մուրադ Մամադովն էր: Եզրափակիչ գոտեմարտում էլ Կարեն Ասլանյանն իրեն գերազանց դրսեւորեց՝ ոչ մի միավոր չզիջելով մրցակցին: Հաղթելով 8-0 հաշվով, Կարենը հռչակվեց Եվրոպայի չեմպիոն:

Արծաթե մեդալներով տուն կվերադառնան Արմեն Հակոբյանն (69 կգ) ու Գեղամ Թորգոմյանը (50 կգ): Արմենը պայքարը սկսելով 1/16 եզրափակիչից, հաղթեց ուկրաինացի Վիկտոր Պոտապովին, մոլդովացի Վասիլի Գալուցային, ռուսաստանցի Իսմայիլ Սաիդխաբանովին ու բելառուս Սերգեյ Մալյասկիին: Եզրափակիչ գոտեմարտում Արմենը 0-3 հաշվով զիջեց թուրք էմրե Բասարին:

Գեղամ Թորգոմյանը հաջորդաբար հաղթելով չեխ Լիբոր Միլիտովսկուն, ֆինն Ռամի Սիրյային, մոլդովացի Ալեքսանդր Բիկիուին, եզրափակիչում 1-6 հաշվով պարտվեց վրացի Իրակլի Շավաձեին եւ բավարարվեց արծաթե մեդալով:

Բրոնզե մեդալակիրներ դարձան Տարոն Դումոյանը (54 կգ) եւ Տիգրան Աբրահամյանը (63 կգ): Տարոնը նախնական փուլերում առավելության հասավ Շվեդիայի ներկայացուցիչ Արդիթ Ֆազլջիջայի եւ ուկրաինացի Պավլո Մոլնարի նկատմամբ: Կիսաեզրափակիչում Տարոնը պարտվեց ադրբեջանցի Քարիմ Ջաֆարովի հետ գոտեմարտում: Բրոնզե մեդալի համար պայքարում հայ ըմբիշը հաղթեց հունգարացի Էրիկ Տորբային:

Տիգրան Աբրահամյանն էլ հաղթելով սլովակ Միլոշ Ցուվարային ու բելառուս Ռուսլան Անամալեւին, քառորդ եզրափակիչում պարտվեց Գերմանիան ներկայացնող Մուհամեդ Եսերին: Բրոնզե մեդալի համար մրցավեճում հայ ըմբիշը հաջող գոտեմարտեց բուլղարացի Սալի Սալի եւ լատվիացի Վլադիսլավ Լեբեդեւի հետ ու արժանացավ պարգեւի:

Մեր մյուս 2 ըմբիշները՝ Հարություն Միխայելյանը (76 կգ) եւ Արթուր Սիմոնյանը (46 կգ) մոտ էին բրոնզե մեդալին, սակայն վճռորոշ գոտեմարտում պարտվեցին ու գրավեցին 5-րդ տեղը:

Այսպիսով, Կատովիցեում Հայաստանի հունահռոմեական հավաքականը նվաճեց 2-ական ոսկե, արծաթե եւ բրոնզե մեդալ: Մինչ այդ մրցագորգ դուրս եկած մեր ազատոճայինները նվաճել էին 1 ոսկե եւ 3 բրոնզե մեդալ: Այնպես որ հայ պատանի ըմբիշները մեդալների հարուստ ավարով են վերադառնում Հայաստան:

Արթուր Սարկիսովը տեղափոխվեց «Վոլգա»

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի հարձակվող Արթուր Սարկիսովը մեկ տարվա պայմանագիր է կնքել Նիժնի Նովգորոդի «Վոլգայի» հետ, որը հանդես է գալիս ՌԴ պրեմիեր լիգայում: Սարկիսովը «Վոլգայում» կխաղա վարձավճարով: Նա անցած մրցաշրջանում էլ վարձավճարով խաղում էր ՌԴ առաջին խմբի առաջնության մասնակից Յարոսլավլի «Շիննիկում»: Հիշեցնենք, որ Սարկիսովի տրանսֆերային իրավունքները պատկանում են Մոսկվայի «Լոկոմոտիվին»:

Ժակ Ռոգեն դեմ է լռության դրոշի հայտարարմանը

ՄՕԿ-ի նախագահ Ժակ Ռոգեն Լոնդոնում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է, որ օլիմպիական խաղերի բացման արարողության ժամանակ լռության րոպե չի հայտարարվելու: Նման պահանջով ՄՕԿ-ի ղեկավարությանն էին դիմել ԱՄՆ-ի, Իսրայելի եւ Գերմանիայի քաղաքական գործիչները, ինչպես նաեւ 40 տարի առաջ Մյունխենի օլիմպիադայում ահաբեկչության զոհ դարձած մարզիկների ընտանիքների անդամները: Ռոգեն նշել է, որ խաղերի բացման արարողության ընդհանուր տոնական մթնոլորտը չի նպաստում, որպեսզի հիշատակվի 40 տարի առաջ Մյունխենում տեղի ունեցած ողբերգությունը: ՄՕԿ-ի նախագահը նաեւ ավելացրել է, որ միջազգային օլիմպիական կոմիտեի պատվիրակությունը կմասնակցի սեպտեմբերի 5-ին Իսրայելի ԱՕԿ-ի կազմակերպելիք հիշատակի միջոցառումներին:

Հիշեցնենք, որ 1972-ին Մյունխենում կայացած ամառային օլիմպիադայի ժամանակ պաղեստինյան «Սեւ սեպտեմբեր» ահաբեկչական խումբը սեպտեմբերի 5-ին ահաբեկչություն էր իրականացրել, որի հետեւանքով զոհվել էին Իսրայելի մարզական պատվիրակության 11 անդամներ եւ գերմանացի մեկ ոստիկան:

«Ուլիսին» լուրջ խնդիր է սպասում

Այսօր Երեւանի ժամանակով ժամը 21-ին Տիրասպոլում «Ուլիսը» չեմպիոնների լիգայի պատասխան խաղում կսկսի մրցավեճը «Շերիֆի» հետ: Ինչպես հայտնի է, Երեւանում այս թիմերի մրցավեճում 1-0 հաշվով հաղթել էր «Շերիֆը»: Այնպես որ պայքարը շարունակելու համար «Ուլիսին» անհրաժեշտ է անպայման հաղթել: Խաղն ուղիղ հեռարձակմամբ կցուցադրվի Հանրային հեռուստատեսությամբ:

«Ուլիսը» երեկ վաղ առավոտյան մեկնեց Մոսկվա, որտեղից ուղեւորվեց Քիշինեւ, ապա ավտոբուսով հասավ Տիրասպոլ: «Ուլիսը» հանգրվանել է «Կոդրու» 4 աստղանի հյուրանոցում: Երեկ երեկոյան թիմը մարզում անցկացրեց Տիրասպոլի «Շերիֆ» մարզադաշտում:

Հարկ է նշել, որ բուքմեյքերները բավականին հոռետեսորեն են տրամադրված «Ուլիսի» հաջողության հանդեպ: Մեր չեմպիոնի հաղթանակի գործակիցը 10 է, մինչդեռ «Շերիֆի» հաջողությունը գնահատվում է 1,3 գործակցով: Ոչ-ոքիի համար խաղադրույքներ են ընդունվում 5 գործակցով:

Ալոնսոն ամրապնդվեց 1-ին տեղում

Ֆեռնանդո Ալոնսոյի հաղթանակով ավարտվեց «Ֆորմուլա-1» դասի Գերմանիայի Գրան պրիի խաղարկությունը: Այս հաղթանակի շնորհիվ Ալոնսոն ամրապնդեց դիրքերն առաջին հորիզոնականում՝ վաստակելով 154 միավոր: 2-րդ տեղում 120 միավորով Մարկ Ուեբերն է, որը Գերմանիայում մրցումներն ավարտեց 8-րդ հորիզոնականում: Լավագույն եռյակը եզրափակում է Սեբաստիան Ֆեթելը (110 միավոր): Նա եզրագիծը հատեց 5-րդը:

«Կոնստրուկտորների գավաթի» մրցաշարում առջեւում «Ռեդ Բուլն» է՝ 230 միավոր: 2-րդ տեղում «Ֆերարին» է (177), 3-րդում՝ «Մակլարենը» (160):

ՀԱՄԱՍ

Մովսիսյանն ու Մելքումյանը գերազանցեցին բոլորին

Գրոսմայստերներ Սերգեյ Մովսիսյանն ու Հրանտ Մելքումյանը գերազանց հանդես եկան շվեյցարական Բիլ քաղաքում մեկնարկած շախմատային փառատոնի շրջանակներում անցկացված այդ երկրի առագ շախմատի բաց առաջնությունում: Սերգեյ Մովսիսյանը 9 պարտիաներում տոնելով 6 հաղթանակ, 3-ն ավարտելով ոչ-ոքի, դարձավ մրցաշարի հաղթող: Հրանտ Մելքումյանը եւս վաստակեց 7,5 միավոր՝ տոնելով 7 հաղթանակ, մեկ պարտիա ավարտելով ոչ-ոքի, կրելով 1 պարտություն: Նա Մովսիսյանին զիջեց լրացուցիչ գործակիցներով: Լավագույն եռյակը 7 միավորով եզրափակեց Իսրայելը ներկայացնող Միխայել Ռոյզը:

Այժմ մեր շախմատիստները Բիլում կմասնակցեն շվեյցարական մրցակարգով անցկացվելիք մրցաշարին, որտեղ կկայանա 11 տուր: Մասնակիցներից 30-ը գրոսմայստերներ են: Բացի այդ մրցաշարից, կանցկացվի նաեւ գրոսմայստերական մրցաշար 6 մասնակիցների միջեւ: Գլխավոր մրցանակի համար կպայքարեն Մագնուս Կառլսենը, Հիկարու Նակամուրան, Վան Հաոն, Ալեքսանդր Մորոզեւիչը, Էթիեն Բաֆրոն եւ Անիշ Գիրին:

Բիլում անցկացվեց նաեւ կայծակնային խաղի մրցաշար, որում 8 մասնակիցները վիճակահանությամբ զույգեր էին կազմել եւ օլիմպիական սկզբունքով վիճարկեցին գլխավոր մրցանակը: Հաջողությունն ուղեկցեց Հիկարու Նակամուրային, որը եզրափակիչում 1,5-0,5 հաշվով պարտության մատնեց Էթիեն Բաֆրոյին:

Հայ շախմատիստուհիները բարելավում են դիրքերը

Ջերմուկում ընթացող շախմատի կանանց Գրան պրիի մրցաշարի հերթական 2 տուրերում Լիլիթ Մկրտչյանը նախ հաղթեց Նադեժդա Կոսինցեւային, ապա ոչ-ոքի խաղաց Կատերինա Լահնոյի հետ: Իսկ Էլինա Դանիելյանը հաշտություն կնքեց Ջժան Սյուեի եւ Հոու Յիֆանի հետ: 6 տուրից հետո մեր շախմատիստուհիները վաստակել են 3-ական միավոր եւ բաժանում են 5-8-րդ տեղերը Կատերինա Լահնոյի եւ Ջժան Սյուեի հետ:

Միանձնյա առաջատարը Ցզյան Վենցզյունն է, որն ունի 4,5 միավոր: Նա կեսական միավոր վաստակեց Եկատերինա Կովալեւսկայայի եւ Նադեժդա Կոսինցեւայի հետ պարտիաներում:

4-ական միավորով առաջատարին հետապնդում են Հոու Յիֆանը, Համպի Կոներուն եւ Ժուան Լուֆեյը: Կոներուն ու Լուֆեյը 5-րդ տուրում մրցեցին միմյանց հետ եւ հաշտություն կնքեցին, իսկ Յիֆանը հաղթեց Նինո Խուրցիձեին: 6-րդ տուրում Կոներուն հաղթեց Եկատերինա Կովալեւսկայային, Լուֆեյն էլ պարտության մատնեց Խուրցիձեին:

Երեկ մրցաշարում հանգստյան օր էր, իսկ այսօր կկայանա 7-րդ տուրը: Էլինա Դանիելյանը կմրցի Ժուան Լուֆեյի հետ, իսկ Լիլիթ Մկրտչյանը կհանդիպի Բաթիոյակ Մունգունտուլի հետ:

Էդուարդ Մնացականյանը վետերանների ՀՀ չեմպիոն

Միջազգային վարպետ Էդուարդ Մնացականյանը նվաճեց վետերանների Հայաստանի շախմատի չեմպիոնի տիտղոսը: Հայկական շախմատի վետերանը 7 հնարավորից վաստակեց 6 միավոր: Նույնքան միավոր իր օգտին գրանցեց նաեւ Անուշավան Առաքելյանը: Չեմպիոնը որոշվեց լրացուցիչ մրցախաղում, որում Մնացականյանը հաղթեց 3-2 հաշվով:

Առաջնությանը մասնակցեցին 22 շախմատիստներ: Մնացականյանը, որը մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշն ուներ (2256), մրցաշարն անցկացրեց առանց պարտության: Նա հաղթեց Ռազմիկ Ավագյանին, Ռուբիկ Ստեփանյանին, Ադոլֆ Դեմիրխանյանին, Անուշավան Առաքելյանին ու Վանյա Ջուլհակյանին, ոչ-ոքի խաղաց Ալեքսան Մանուկյանի եւ Հենրիկ Փաշայանի հետ: Մրցանակային 3-րդ տեղը 5 միավորով գրավեց Ալեքսան Մանուկյանը:

Մուրադյան քույրերն անգերազանցելի են

Շախմատի Լիբանանի կանանց առաջնությունում կրկին իրենց բարձրության վրա էին Սյուզան եւ Քնարիկ Մուրադյան քույրերը: Շրջանաձեւ մրցակարգով, 6 մասնակիցների մասնակցությամբ անցկացված մրցաշարում 5 հնարավորից վաստակելով 4,5 միավոր, Սյուզանը հռչակվեց Լիբանանի չեմպիոնուհի: 2-րդ տեղը գրավեց Քնարիկը, որը քրոջը զիջեց ընդամենը կես միավորով: 2-րդ տուրում կայացած նրանց մրցավեճն ավարտվել էր ոչ-ոքի:

Արզումանյանը փորձաշրջան կանցնի «Մորդովիայում»

Հայաստանի հավաքականի պաշտպան Ռոբերտ Արզումանյանը երեկ ժամանել է Սարանսկ, որտեղ մի քանի օր փորձաշրջան կանցնի ՌԴ պրեմիեր լիգայի նորեկ «Մորդովիայի» կազմում: Ակումբի ղեկավարությունը հույս ունի, որ Արզումանյանը կհամալրի թիմը:

Առաջին հաղթանակը Խաչմանյանի օրոք

Առաջնության 3-րդ շրջանին նախապատրաստվող «Արարատը» նոր գլխավոր մարզիչ Աբրահամ Խաչմանյանի գլխավորությամբ առաջին հանդիպումն անցկացրեց: Արարատի «Այգ» մարզադաշտում արարատցիներն ընկերական խաղում 2-1 հաշվով հաղթեցին «Իմպուլսին»: «Արարատից» 2 գոլերն էլ խփեց վերջերս կրկին թիմ վերադարձած նախկին ուլիսցի Գեւորգ Նռանյանը: «Իմպուլսից» աչքի ընկավ Հայկ Իշխանյանը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ Օրվա հետքերով

ՎիվաՍել-ՄՏՍ-ն համագործակցում է «Ռադիդա» վճարային համակարգի հետ

ՎիվաՍել-ՄՏՍ-ն՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ձեռնարկությունը, հայտարարում է ռուսաստանյան խոշորագույն՝ «Ռադիդա» վճարային համակարգի հետ համագործակցության մասին, որի շնորհիվ ՎիվաՍել-ՄՏՍ-ի բաժանորդները կկարողանան վճարումներ կատարել կանխավճարային եւ հետվճարային ծառայությունների համար:

Մշտապես լինելով տեխնոլոգիական նորարարությունների ներդրման առաջատար՝ Հայաստանում հեռահաղորդակցության առաջատար օպերատոր ՎիվաՍել-ՄՏՍ-ն ջանք չի խնայում կյանքի որակի բարելավմանը նպաստող՝ հասանելի բոլոր տեխնոլոգիաներով գործող ծառայություններն իր բաժանորդներին մատուցելու համար:

Ակնթարթային դրամական փոխանցումների «Ռադիդա» համակարգը ռուսաստանյան շուկայում հաջողությամբ գործում է սկսած 2001 թ.-ից: «Ռադիդա» համակարգը բանկային գործունեություն ծավալելու իրավունքով կազմակերպություն է եւ «Նոմոս բանկ» խմբի մաս է կազմում: Ընկերությունն առաջարկում է վճարումների ընդունման կետերի ընդարձակ ցանց, ներառյալ մի շարք խանութների դրամարկղերի, բջջային ծառայություններ մատուցող ընկերությունների, սպասարկման կենտրոնների, ինքնասպասարկման տերմինալների եւ բանկոմատների միջոցով: Տարատեսակ ապրանքների եւ ծառայությունների դիմաց ակնթարթային վճարումներ, բանկային տրանզակցիաներ եւ դրամական փոխանցումներ կարելի է իրականացնել Ռուսաստանի տարածքում գործող 90000 կետերում: «Ռադիդա» օնլայն համակարգի միջոցով բջջային հեռախոսով կարելի է նաեւ դրամական միջոցներ փոխանցել ծառայությունների դիմաց վճարում իրականացնող անձանց:

«Ռադիդա» վճարային համակարգը համագործակցում է «Ռուսաստանի փոստ» ընկերության, ռուսաստանյան եւ արտասահմանյան խոշորագույն բանկերի, մանրածախ առեւտրի ցանցերի, առեւտրային եւ այլ ծառայություններ մատուցող ձեռնարկությունների, այդ թվում՝ առաջատար բջջային եւ ֆիքսված հեռախոսային ծառայություններ մատուցող օպերատորների, կոմերցիոն հեռուստաընկերությունների, ինտերնետ-պորտալների, կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունների եւ այլ կազմակերպությունների հետ:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.mts.am վեբ-կայքը, զանգահարեք թեժ գծի 111 անվճար հեռախոսահամարով, առցանց զրուցեք մեր օպերատորների հետ «111 օնլայն» ծառայության միջոցով, կամ այցելեք Հայաստանի տարածքում գործող մեր սպասարկման կենտրոններից մեկը:

«Խոսում է քաղաքը» սակագնային պլանն՝ այժմ երկու տարբերակով

Հայաստան ՎիվաՍել-ՄՏՍ-ն՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ընկերությունը, ուրախ է տեղեկացնել, որ այժմ անհատների ու փոքր ձեռնարկությունների համար նախատեսված «Խոսում է քաղաքը» հետվճարային սակագնային պլանը հասանելի է երկու տարբերակով:

Նախորդող ծառայության անվանում	I տարբերակով	II տարբերակով
Ներքրանցային հեռախոսակապակոնակ (ըստ գծի)	1500	1500
Հեռախոսակապակոնակ գծերի 2Է ավելացնելը (ըստ գծի)	150	0
ԳՍՄ-կապ գծերի 2Է թվային ավելացնելը (ՏՄՏ)	150	150
Ինտերնետ (ՄԲ)	0	1500

Կախված հաղորդակցման պահանջներից, 5500 դրամ ամսավճարի դիմաց կարելի է ընտրել ներառված ծառայությունների առավել հարմար տարբերակը (տես աղյուսակը):

Ինչպես նախկինում, ամսվա ընթացքում նշվածից ավելին օգտագործելու դեպքում ծառայությունների վճարը գանձվում է ըստ սահմանված սակագների:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.vivacell.am կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:

Բերքը՝ Վ. Սահարյանից, «կորիզը»՝ Եվա Ռիվասից

Հասարակությունն այսօր կարծես այնքան էլ ուշադրություն չի դարձնում անաղահով ու ծնողազուրկ երեխաներին, ծերերին, սոցիալապես խոցելի, թիրախային խմբերին: Ինչի՞ պակաս են զգում՝ ուշադրությա՛ն:

Օրեր առաջ «Արմենիա» պրոդյուսերական կենտրոնը կազմակերպեց «Բարեգործական բերքահավաք», հանրությանը հայտնի մարդիկ եւ կամավորներ իրականացրին ծիրանի բերքահավաք, որն ուղարկվեց մանկատներին: Բերքահավաքին մասնակցեցին երգահան Սասուն Պասկեւիչյանը, երգիչ Անդրեն, երգահան, դերասան Ռիչարդ Մադլենյանը, «AV show» պրոդյուսերական կենտրոնի տնօրեն, հաղորդավար Արմեն Սարգսյանը, ինչպես նաեւ «**Ազգ**» օրաթերթը, որը «Բարեգործական բերքահավաք»-ի մասին զրուցեց «Արմենիա» պրոդյուսերական կենտրոնի տնօրեն **Վալերի Սահարյանի** հետ. «Այս ծիրանի այգին ձեռք եմ բերել անցյալ աշնանը: Այգու բերքատվությունը մեզ համար անսպասելի էր, քանի որ բարձիթողի, չմշակված վիճակում էր: Այս բերքը, ինչ որ կա, բարձրալի կամքի է: Որոշեցինք բերքն ուղարկել մանկատներ եւ ծերանոցներ: Եթե մի հատիկ ծիրանը փոքրիկ ժպիտ պարգեւի մանկանը, ապա ես երջանիկ կլինեմ»:



«**Ազգ**»-ը ճշտեց, թե մինչ այս նմանատիպ ինչ բարեգործական նախաձեռնություններ է մասնակցել «Արմենիա» պրոդյուսերական կենտրոնը; Վ. Սահարյանն ասաց. «Մոսկվայի հայ գործարարների» ակումբի անդամ եմ, որի հոգածության տակ են Հայաստանի մի քանի մանկատներ, եւ մշտապես ֆինանսական աջակցություն ենք ցուցաբերում, երբ դիմում են մեզ, մասնակցում ենք հիվանդ երեխաների համար կազմակերպված դրամահավաքների: «Արմենիա» պրոդյուսերական կենտրոնի երգչուհի Եվա Ռիվասը երեք անգամ մասնակցել է բարեգործական համերգների, որոնք կազմակերպված էին հիվանդ երեխաների օգնության համար: Երբ մեզ հրավիրում են, ապա մեծ սիրով մասնակցում ենք, եթե վստահ ենք, որ միջոցները ուղղվելու են ճիշտ հասցեատիրոջը»:

Բերքը ռեժիսոր Հրաչյա Մեսրոպյանի ձեռամբ հանձնվեց Նոր Խարբերդի մասնագիտացված մանկատանը, «Զանգակատուն» միջնակարգ դպրոցին, Մարի Իզմիրլյանի անվան մանկատանը, Երեւանի «Մանկան տանը», «Զատիկ», «Օրրան» մանկատներին:

«Արմենիա» պրոդյուսերական կենտրոնի նախաձեռնությանը միացան «**Ազգ**» օրաթերթը, «Էյ ՎԻ» պրոդյուսերական կենտրոնը, «Ձեռք» ԵԿ ՀԿ-ն:

Վ. Սահարյանը մեզ հետ զրույցում նշեց նաեւ, որ նման նախաձեռնությունները կկրեն պարբերական բնույթ, եւ ասաց, որ դեմ է բարեգործական նախաձեռնությունների լուսաբանմանը, որը դառնում է այս կամ այն կազմակերպության համար քարոզչություն:

Սակայն «**Ազգ**»-ը նման նախաձեռնությունների կողքով անտարբեր չի անցնում, պարբերաբար լուսաբանում եւ աջակցում է:

ՄԱՆՈՒՇԱԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հենակետային (ավագ դպրոց) վարժարանի մաթեմատիկայի, պատմության, ֆիզկուլտուրայի եւ նկարչության ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է 2 փուլով՝ գրավոր (հանրակրթական առարկայական ուսումնական ծրագրերին համապատասխան) եւ բանավոր (մանկավարժական մասնագիտական գործնական հմտություններ):

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Դիմումը՝ հասցեագրված գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),

2.Բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման ատեստաթուղթ (դիպլոմ) կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից,

3.Անձնագրի պատճենը,

4.Ինքնակենսագրություն (ձեւ 4),

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6.Մեկ լուսանկար 3x4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

7.ՀՀ առական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են հուլիսի 24-ից մինչեւ օգոստոսի 27-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչեւ 14:00-ն, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 30-ին՝ ժամը 12:00-ին, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հենակետային (ավագ դպրոց) վարժարանում, հասցեն՝ ք. Երեւան, Ագաթանգեղոսի 7ա :

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010)59-22-72 հեռախոսահամարով:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը հայտարարում է մրցույթ պրոֆեսորադասախոսական անձնակազմի թափուր պաշտոնների համար

1. Իրավագիտության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն
ասիստենտ - 5

Համապատասխան պաշտոնին, ըստ տարակարգերի, կարող են հավակնել.

ասիստենտ - ասիստենտի պաշտոն զբաղեցնող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձինք:

Ծանոթություն.

Հավակնորդները համալսարանի կադրերի բաժին են ներկայացնում.

▼ դիմում ռեկտորին
▼ կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
▼ քաղվածք աշխատանքային գրքույկից,
▼ համառոտ ինքնակենսագրություն՝ ժամանակագրական տեսքով,
▼ բնութագիր վերջին աշխատավայրից,
▼ բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
▼ գիտական աստիճանը և գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները (առկայության դեպքում),
▼ տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակը,
▼ տվյալներ պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ:

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ 30 օր, սույն հայտարարության հրապարակման օրվանից:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել համալսարանի կադրերի բաժին:

Հասցեն՝ ք. Երևան, Խանջյան 5 , հեռ. 59 70 84:

ՌԵԿՏՈՐԱՏ

Հայտարարություն պարզեցված ընթացակարգի մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2012թ.-ի հուլիսի 17-ի թիվ 7 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը ԳՊՊ-ԱՇՁԲ-02/12

Պատվիրատու՝ «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը, որը գտնվում է ք.Գորիս, Ավանգարդ 4 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգով գնում:

Պարզեցված ընթացակարգով գնման հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հետ թիվ 1 ուսումնական մասնաշենքի հաշվապահության հարկաբաժնի նորոգման աշխատանքների գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի թիվ 1 ուսումնական մասնաշենքի հաշվապահության հարկաբաժնի նորոգման աշխատանքների ձեռք բերումը: Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամիս ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխան պարզեցված ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Յուրաքանչյուր Մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի պահանջների համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին գնումների աջակցման կենտրոն, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Պարզեցված ընթացակարգի հայտարարության հիման վրա Պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվա ընթացքում թղթային ձևով սահմանված հրավեր, մինչև հայտերի բացմանը նախորդող 2 օրացուցային օրվա ժամը 15:00-ն:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի թիվ 1 մասնաշենք, Ավանգարդ 4 հասցեով, մինչև հուլիսի 31-ը 1500-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պայմանների համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Գորիսի պետական համալսարան

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 23.7.2012, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունեաց 2: